

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



0284-2315

0284

~~335.5~~
~~6-40~~

Հայուսամի Առցիալիստկան Խորհրդային Համբավետություն

3K13

4-68

ԿՐ. ՄԱՐՏ ՏԵՂ Ֆ. 619610

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
— ՄԱՆԻՖԵՍ

Թարգմ. քայլարից [redacted]



ՊՈՏՈՎԱՆ ՀՐԱՄԱՆ ՀԵՇՈՒԲԵՅԻՆ — № 28.
Յեշուբեյ — 1922

26 JUN 2013

370

335.5

5-40

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՆԱԽԱԲԱՆՆԵՐԸ

I

1872 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Ա. Ռ Ա. Զ Ա Ա Ն Հ

«Կոմունիստների Միությունը», մի միջազգային բանավորական միություն, վոր այն պահի պարագաներում, հասկանալի բան և, կարող եր լոկ գաղտնի գոյություն ունենալ, 1847 թվականի նոյեմբերին, Լոնդոնում կայցած համագումարում, պատվիրեց ներքո ստորագրյալներիս կազմել կուսակցության մանրամասն տեսական և գործնական ծրագիրը լույս ընծայելու նպատակով: Այդպես և ծագել ստորեք բերված Մանիֆեստը, վորի ձեռագիրը տպագրության համար Լոնդոն ուղարկվեց Փետրվարյան հեղափոխությունից մի քանի շաբաթ առաջ: Առաջին անգամ գերմաներն և հրատարակվել և այդ լեզվով Գերմանիայում, Ավստրիայում և Ամերիկայում՝ առնվազն տասներկու տպագրություն և ունեցել: Անգլերն առաջին անգամ լույս և տեսնել 1850 թվին Լոնդոնում՝ „Red Republican“-ի (Կարմիր Հանրապետականի) մեջ, միս Հելեն Մակֆերլենի թարգմանությամբ և 1871 թվին առնվազն յերեք տարրեր թարգմանությամբ—Ամերիկայում՝ Ֆրանսերն առաջին անգամ լույս և տեսնել 1848 թվականի հունվարյան ապստամբությունից քիչ առաջ՝ Փարիզում և ապա՝ Նյու-Յորքի „Le Socialiste“-ի (Սոցիալիստի) մեջ: Մի նոր թարգմանություն էլ և պատրաստվում է Եներեն—Լոնդոնում լույս տեսավ գերմաներն առաջին հրատարակությունից քիչ անց: Թուսերեն—Փընկում, 60-ական թվականներին: Դանիերեն, և լուսագրի լույս տեսնելուց հետո թարգմանվել:

Վորքան ել վերջին քսանհինդ տարվա ընթացքում՝
պարագաները խխտ փոխված լինեն—այս Մանիքեստում
արձարձած ընդհանուր հիմունքներն ամրողական և խշոր
գծերով այսոր ել կատարելապես ճիշտ են: Մանրամասները
տեղ-տեղ կարելի յե շակել: Այդ հիմունքների կիրարկութեա-
մենուրեաք և ամեն ժամանակ, ինչպիս ինքը Մանիքեստն
և պարզում, պատմականութիւն դասավորված հանդամանքնե-
րից և կախված: Աւտի յերկրորդ դիմի վերջում հանձնուա-
րաբած հեղափոխական միջոցներն առանձնապես նշանակու-
թյուն չունեն: Այդ ական այսոր շատ կողմից փոփոխության
կարիք կունենար Շնորհիվ խոշոր արդյունազործության
անշափ դարպացման վերջին քսանհինքամյակում և զբա-
նեադ բանվոր զասակարգի կուսակցական կազմակերպ-
ման, շնորհիվ զործնական փորձի, նաև՝ փեարվարյան հե-
ղափոխության, ապա՝ առաջի ևս Փարիզյան կոմունայի,
վորտեղ պրոլետարիատն առաջին անգամ յերկու ամսվա
ընթացքում քաղաքական իշխանության աեր եր, և ներկա
ծրագիր տեղ-տեղ հասցել եւ կոմունան, մասնավանդ, ցույց
տվեց, վոր «քանիվոր զասակարգը չի կտրող պատրաստի
ոկտոական մեքենան պարզապես իր ձեռքն առնել և շարժ-
ման միջ զնել հոգուտ իր սեփական շահերից: (Տես՝ «Քա-
ղաքացիական կոիվը Ֆրանսիայում»)՝ Միջազգային Բան-
վորական Միության Ըստհանուր Խորհրդի զիմուտը՝ վեր-
մաննեն հրատարակություն, եջ 19, վորտեղ այս միաբն
ավելի հանգամանորեն և արձարձված է Ալա, պարզ բան եւ
ոցիալատական գրականության քննադատությունն այսոր
արգելու թերի յե, վորովհետեւ մինչև 1847 թվականն և հաօ-
նում Նմանապես այս նկատադությունները, վոր քննությու-
գում են կոմմանիստների գերքը գնապի տարբեր զիմազիք
կուսակցությունները (զլութա W) թիյն չքմնական դժերով
այսոր ել ճիշտ են, այնու հանգիրձ մանրամասները
հիմա հնացել են այն պատճառով, վոր քաղաքական ընդ-
հանուր կացությունն և փոխվել, և պատմական զարդացումը
թվյալ կուսակցություններից շատերը վերացրել և աշխար-
հու յերեսից:

Ելուամենայիկ Մանիքեստը՝ պատմական փաստա-

թուղթ ե, վորը մենք այլիս իրավունք չենք համարում փո-
փոխության յենթարկելու: Ավելի ուշ լույս կահանի մի նոր
հրատարակություն 1847 թվականից մինչև մեր ժամանա-
կաշրջանն ընդգրկող ներածությամբ Առաջիկա հրատարա-
կությունը չափազանց անսպասելի յեղափ մեզ համար, վոր-
պեսզի մենք ժամանակ ունենայինք այդ բանն անելու

Լուգան, 24 հունիսի 1872 թ.

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ
ՓՐԵԴՐԻԿ ԵՆԳԵԼԸ

II

1883 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն. Բ.

Ներկա հրատարակության նախարանը յես, տարտ-
քախտարար, մենակ պիտի ստորագրեմ: Մարքսը՝ այն
մարդը, վորին մերուայի և Ամերիկայի բովանդակ բանվոր
զասակարգն ավելի յե պարտական, քան ուրիշ վորեն մեկին
—Մարքսը հանգչում և Հայզետի գերեզմանատանը, և նրա
շիրիմի վրա հիմա աճում և առաջին դալարը: Նրա մահից
հետո Մանիքեստի վորեն վերամշակման կամ ամրողացման
մասին չի կարող այլևս խոսք լինել: Աւտի առաջի ևս
կարեոր ևմ համարում այսուղի կրկին կտրուկ կերպով հաս-
տատել հետեւալը:

Մանիքեստի միջով անցնող հրմական միտքը թե՝
յուրաքանչյուր պատմաշրջանի անականական արտադրությու-
նը և նրանով անհրաժեշտորեն պայմանավորված հասարա-
կական կազմը այդ պատմաշրջանի քաղաքական և մտավոր
պատմության հիմքն եւ, թե՝ համապատասխան դրան (հնա-
գարյան համայնական հողատիրության քայլայումից հետո)՝
վողջ պատմությունը դասակարգային պայքարի պատմու-
թյուն և յեղել, շահագործողների և շահագործվողների միջեւ,
հասարակական զարպացման զանազան աստիճանների վրա՝
աիրող և ճնշված զասակարգերի միջև, թե՝ սակայն, այդ
պայքարը հիմա այն աստիճանին և հասել, վոր շահագործվող

և կեղեքող դասակարգը (պրոլետարիատը) չի կարող շահագործող և կեղեքող դասակարգից (բուրժուազիայից) տպատել իրեն առանց միաժամանակ ամբողջ հասարակությունն ընդ միշտ ազատագրելու շահագործումից, կեղեքումից և դասակարգային պայքարից—այս հիմնական միտքը միայն և միմիայն Մարքսին և պատկանում*:

Ես այդ արդեն հաճախ արտահայտել եմ: Սակայն հենց այժմ կարեոր է, վոր նույնն ասված լինի Մանիֆեստի նախարանում:

Լոնդոն, 28 հունիսի 1883 թ.

Փ. Խնհելս

III

1890 թվականի գերմանական ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Ա. Ռ. Շ. Ռ. Բ. Ա. Ն. Հ.

Նախընթաց գրությունից հետո, Մանիֆեստի գերմաներեն մի նոր հրատարակության կարիք և առաջ յեկել Այդ ժամանակամիջոցում Մանիֆեստի գլխով անցած գնացածն արժե այսուել հիշատելի:

1882 թվին, Ժընկում լույս տեսավ Վերա Զասուլիչի արած յերկրորդ սուսերեն թարգմանությունը **: Մարքսն ու յես ասածարան եյինք զրել, վորի գերմաներեն բնագիրը, առարարախտաբար, կորցրած լինելով՝ հարկադրված եմ սու-

* «Այդ ժողին—առել եմ անդիքեն թարդմանության նախաբանում—վարին բառ ի պատմակրտության մեջ զինակած և առաջադիր առաջարկության մեջ՝ այդ մտքին 1845 թիցց մի քանի տարի առաջ յերկուս ել մռանալու վրա եյինք: Թե գործան իմ յես ինքնուրուսարար առաջ զնացել այդ օւզությամբ—ցույց ե տախո իմ առանցորդակարգի զրա թյունն Անդիայում գիրքը Մակայն /1845 թվի գարնակ/ յար յար յա նորից հանդիպեցի Մարքսին Բյուստելում, նա արգեն այդ մետքը վերջնականորեն մշակում ուներ և շարադրեց գրեթե նույն պարզ առաջայտաթյուններով, վոր ես վերը հազարդեցի»:

** Այս պետքած Պիկունումը թյուրագրաւթյուն (օպուկա) և համարում: Նրա առելով՝ նեղելուն հայ անք յե յեկել, վոր Մանիֆեստը ուս սերեն յերկրորդ անդամ վոչ թի ու. Զասուլիչն և թարգմանել, այս ինքը Պիկունովը:

ընսից թարգմանել: Դրանից հոդվածը վոչ մի դեպքում չի շահէ:

Ահա այդ առաջաբանը*:

—«Կոմունիստական կուսակցության Մանիֆեստի» առաջին սուսերեն հրատարակությունը, Բակունինի թարգմանությամբ, վաթունական թվականների սկզբին „ԿՈՂՈ-ԿՈՂ“-ի (Զանգի) տպարանում լույս տեսավ: Այն պահին այդ գրվածքի սուսերեն թարգմանությունն Արևմուտքի աչքում ամենաշատը կուրյոզի նշանակություն ուներ: Ներկայումս նման մի հայացք այլևս անհարին ե: Թե պրոլետարական շարժման բնագավառը «Մանիֆեստի» առաջին հրատարակության միջոցին (հունվար—1848 թ.) վորքան սահմանափակ և յեղել, ամենից լավ վերջին գլուխն և ցույց տալիս՝ «Կոմունիստների դիրքը դեպի տարբեր դիմագիր կուսակցությունները զանազան յերկրներում»:

Նախ և առաջ այսուել բաց են թողնված Ռուսաստանն ու Միացյալ Նահանգները: Դա այն ժամանակն եր, յերբ Ռուսաստանը յերոպական սետիցիալի վերջին մեծ ոլոտվարն եր, և արտադադրը զեպի Միացյալ Նահանգները կլանում եր յերոպական ոլույթարիատի ավելորդ ուժերը: Յերկու յերկրներն ել Յերոպային հում նյութ և ին մատակարարում և մշամանակ նրա արդյունաբերության պրոդուկտների շուկաները հանդիսանում Յերկուսն ել, այսպիսով, այս կամ այն տեսակետից, յերոպական հասարակությունը հենարանն ելին հանդիսանում:

«Վորքան փոխվել և այսոր այդ տմեննը Հենց յերոպացիների ներգաղթն և հարավոր զարձրել հյուսիսային Ամերիկայի յերկուագործության հսկայական զարգացումը, վոր իր մրցումով սասանում և Յերոպայի թե մանր, թե խոշոր հողատիրության հիմքը: Միաժամանակ, չնորհիվ այդ զարգացման, Միացյալ Նահանգները հնարավորություն ունեցան ձեսնամուխ լինելու իրենց արդյունաբերության նժանդակող հարուստ աղբյուրները շահագործելու, այն ել

* Վորքեազի թարգմանությունը յերկրորդ թարգմանությունից արված չինի, այսուեկ առաջին սուսերեն թարգմանությունն ենք վերծում հայերենի:

մյնպիսի թափով ու չափով, վոր շատ շուտով Արևմտյան Յերպապայի արդյունաբերական մենաշնորհին պետք է վերջ տրվի: Յե այդ յերկու հանգամանքները յետագարձ աղդեցություն են անում նայել Ամերիկայի վրա հեղափոխական ուղղությամբ: Ինքնուրույն կերպով աշխատող ֆերմերների մասը ու միջին հողային սեփականությունը, Ամերիկայի քաղաքական կարգի այդ հիմքը, հսկայական ֆերմերների մըցման հարգածների ներքո քանի զնում այսքան ավելի յե ընկնում, մինչդեռ արդյունաբերական շրջաններում կապիտալի առասպեկտական կենտրոնացման հետ միասին, առաջին անգամ բազմաթիվ պրոլետարիատ և գոյանում»:

Անցնենք Ռուսաստանին:

1848—49 թվականների հեղափոխության ժամանակ միայն յերպապական միապետության մեջ եյին տեսնում միակ փրկությունը պրոլետարիատից, վոր այն պահին նոր նոր հեր հավաքում իր ուժերը: Նրանք ցարին յերպապական ուսակցայի պետք հաշակցին: Հիմա նա նսառած և Գատչինայում, իրեւ հեղափոխության ռազմագերի, և Ռուսաստանը — Յերպապայի հեղափոխական շարժման ռուածպահիկ դունդն ե:

Կոմունիստական Մասնիքասի նպատակն է յեղել՝ հաշակել արդի բուրժուական սեփականության զալիք անխուսափելի կործանումը: Սակայն Ռուսաստանում կապիտալիստական կարգի տեսնութ զարգացման և նոր-նոր կազմակերպվող բուրժուական հողատիրության կողքին մենք անունում ենք, վոր հոգի մեծ մասը զինուղացիների համայնական սեփականությունն է:

Այժմ հարց ե ծաղռում: — կարճ ե, արդյոք, ուսասկան պյուղացիական համայնքը, — նախնական համայնական հոդատիրության այդ արդեն ծայր աստիճան քայլայված ձեզ — անմիջակես հողատիրության ավելի բարձր՝ կոմունիստական ձեր անցնել, թե նախ համայնքը հողատիրության կազմալուծման նույն լրջանը պիտի անցնի, ինչ վոր Արեմուաքն ե ապրել իր պատմական զարդացման ընթացքում:

Ներկայումս այդ հարցի միակ համարվոր պատսխանը հետեւյան եւ Յեթե ուսասկան հեղափոխությունն Արևմուս-

քում բանվորական հեղափոխության ազդանշան դառնու — այդ գեղգում արդի ուսւական համայնական սեփականությունը կարող է կոմունիստական զարդացման յնլակետ հանդիսանալ:

Լոնդոն, 21 հունվարի 1882 թ.

Թրեթի նույն միջոցին մի նոր լեհերեն թարգմանություն լույս տեսավ Ժընեվում Manifest kommunistyczny.

Ապա լոյս տեսավ մի նոր դանիերեն թարգմանություն Socialdemocratisk Bibliothek-ում, Кյöbenhayn 1882 թ.

(«Սոցիալ-գենուլրատական գրադարան»-ում, Կոպենհագեն): Այդ թարգմանությունը, տարարախտաբար, լիակատար չեմի քանի հական կտորներ, վոր, ըստ յերկութին, դժվար է յեղել թարգմանել, բաց են թաղավաճ: Բացի այդ տեղեղ շիերթության հետքեր են նշարվում, մի բան, վոր առավել ես օնսախորժ ե, քանի վոր, ինչպես յերկում ե աշխատությունից, յիթե թարգմանիչն ավելի խնամքով վերաբերված լիներ գործին, կարող կլիներ զերազանց արդյունքի համար:

1886 թվին Փրանսերեն մի նոր թարգմանություն* լույս տեսավ Le Socialiste-ի մեջ Փարիզում: Մինչև այժմ յերկան յեկաներից սա լավագույնն է:

Դրանից հետո, նոյն տարբա ընթացքում, հայուսական մի թարգմանություն լույս տեսավ նաև Մարքիզի El Socialista-ի մեջ և ապա առանձին պարույնով Manifesto del Partido Comunista por Carlos Marx y F. Engels, Madrid, Administracion de El Socialista, Herman Cortés 8.

Իրեւ կուրյոզ կհիշտակեմ նայե, վոր 1887 թ. Պոլսի մի հրատարակչի առաջարկված է յեղել «Մանիֆեստի» հայերեն թարգմանությունը, սակայն խեղճ մարդը սիրտ չի արել տպագրել մի գրություն, վարը կրում է Մարքսի անունը: Նա այն կարծիքին է յեղել, թե լավ կլիներ, յեթե իրեւ նեղինակ հանգես գար ինքը թարգմանիչը, մի բան, վոր վերջինս հանձն չեր տեսիլ:

* Լաւբար և Պոլ Լաֆարդի թարգմանությունը: Խան. Պ. Ա.

Մի շաբթ ավել կամ պակաս սխալներ պարունակող ամերիկյան թարգմանություններից հետո, վոր տպագրվել են Անդրիայում, վերջապես 1888 թվին լույս տեսավ հարազատ թարգմանություն: Դա իմ բարեկամ Սամուել Մուրիններ, վոր նախ քան տպագրելը մենք յերկուսով միասին նորից աչքի յենք անց կացրել: Վերսագիրն այսպիս և՝ Manifesto of the Communist Party, by Karl Marx and Frederick Engels. Authorized English Translation, edited and annotated by Frederick Engels. 1888. London, William Reeves, 185 Fleet st. E. C.

Այս թարգմանությունից մի քանի ծանոթություններ անց եմ կացրել ներկա հրատարակության մեջ:

Մանիֆեստն իր սեփական կենսական ընթացքն և ունեցել: Լույս տեսնելուն պիստ նա խանդավառ ընդունելություն դատավ գիտական սոցիալիզմի այն միջոցին դեռ ևս սակավաթիվ առաջպահիկ գողի կողմից (ինչպես ցույց և տալիս առաջին նախարարությունը բերված թարգմանությունների ցուցակը): Սակայն շուտով սետերին, վոր սկսվեց Փարիզի բանվորների 1848 թվի հունիսան պարտությունից հետո, նրան մզեց բնմի խորքը և վերջապես 1852 թվի նոյեմբերին կոմունիստների վրա կարած Թյունի դատավճիռը նրան ուրինական ձանապարհով որենքից գուրս հռչակեց: Փետրվարյան հեղափոխությունից սկիզբ առած բանվորական շարժումը հասարակական ասպարիզից անհետացավ թե չե, Մանիֆեստն ել քաշվեց հրապարակից:

Յերբ վոր յերտպական բանվոր դաստկարգը բավականաշատի ամրացավ տիրող դասակարգերի ենմ մի նոր հարձակում գործելու համար, առաջ յելավ «Բանվորների Միջազգային Ընկերությունը»: Նրա նպատակն եր՝ Յերտպայի և Ամերիկայի վողջ պայքարունակ բանվորությունը ձուլել մի մեծ բանակի մեջ: Ուստի նա չեր կարող յելակետ ունենալ Մանիֆեստի հիմքում դրած սկզբունքները: Նա պիտի այնպիսի ծրագիր ունենար, վոր իր գուրու չփակեր անզիական տրեղ-ունիտնականների, ֆրանսիական, բելգիական, իտալական և հուգանական պրոլետարիաների և գիրման-

կան լասալականների առջե*: Անգամ Բակունինն ու անիշխանականներն եյին ընդունում, վոր այդ ծրագիրը, Խնտերնացիոնալի կանոնադրության հիմնավորումը—Մարքսը վարպետորեն և գրել: Մանիֆեստի առաջադրած սկզբունքների վերջնական հաղթանակը Մարքսը բացառապես բանվոր դասակարգի մտավոր զարդարումից եր ակնկալում, վոր միահամուռ գործունեյության և այդ սկզբունքների քննության անհրաժեշտ հետեւանքը պիտի հանդիսանարության առաջին մեջ մղված պայքարի իրադարձությունը, և տուավել պարտությունները քան աջողություններն անխուսափելիորեն պիտի պարզեցին պայքարողների համար նրանց նախընթաց համադրմանների անրավարարությունը, և բանվոր դասակարգի ազատագրման իրական պայմանների հիմնական ըմբռնումն ավելի զյուրությամբ պիտի մտներ նրանց գլուխը: Յեզ Մարքսն արդարացի յեր: Այլ բան եր բանվոր դասակարգը 1874 թվին, Խնտերնացիոնալի քայլայման պահին և միանգամայն այլ—1864 թվին, յերբ հիմնվեց Խնտերնացիոնալը: Գրուգրունականությունը ոսմանական յերկրներում և յուրորինակ լասալականությունը գերմանիայում մեռնելու վրա եյին, անգամ այն միջոցի ծայր աստիճան յետադեմ անզիական տրեղ-ունիտները հետզհետե այնքան առաջ զնացին, վոր 1887 թվին նրանց համագումարի նախագահը Սուռնօրիում նըանց անունից կարող եր ասել՝ ցցամաքային սոցիալիզմը մեր աչքում կորցրել և իր սարսափը: Իսկ ցամաքային սոցիալիզմը 1887 թվականին զրեթե բացառապես Մանիֆեստի ավետած մի տիսություն եր: Այսպիսով Մանիֆեստի պատմությունը 1848 թվականից սկսած վրոշ չափով արդի բանվորական շարժման պատմությունն և արտացոլում: Ներկայումս դա անկանակած վողջ սոցիալիստական զրականության ամենատարածված, ամենամիջազգային արտադրությունն և,

* Լասալն անձամբ մեզ միշտ խօստովանել ե, վոր ինքը Մարքսի աշշակերտն և և իրեն այդպիսին Մանիֆեստի տեսակետի վրա յե կոնզնած: Ոյլ ե նրա այն կողմանակիցների բանը, վարոնք նրա առաջարձական պարկ վայելող արտադրի ընկերության պահանջից դենը չեյին տնցնում և ըստանդակ բանվոր դասակարգը պետական պղնության և ինքնուգնության կողմանակիցների եյին բաժանում:

Սիրիոս ականք մինչև Կալիֆորնիա—բոլոր յերկրների
բյուրավոր բանվորների ընդհանութեր ծրագիրը:

Այսու հանդերձ՝ Մանիքեստը լույս ընծայելու պահին
մենք չվստահացանք սոցիալիստական անվանել նրանու
Յերկու տեսակ մարդկանց եյին 1848 թվականին սոցիալիստ
անվանում՝ մի կողմից զանազան ռատոպիտական սիստեմների
կողմանակիցներին, հատկապես՝ ովենականներին—Անգլիայում
և ֆուրիերականներին—ֆրանսիայում, վորոնք այն շրջա-
նում աշխատերիկ և աստիճանաբար մահացող աղանդավորա-
ներ եյին դարձել, մյուս կողմից—բազմազան սոցիալական
հեքիմներին, վորոնք կամնում եյին, առանց կապիտալին
ու շահին ամենաչնչին վնաս հասցնելու, իրենց պես-պես
համագարմաններով և տեսակ-տեսակ կարկատաններով վե-
րացնել հաստատական ցավելլը: Յերկու դեպքում ել այդ
մարդիկ բանվորական շարժումից դուրս եյին կանոնած և
«լուսավորյալ» զառակարգերից եյին: պաշտպանություն
ակնկալում Ընդհակառակը՝ բանվորության այն մասը, վոր
զուտ քաղաքական հեղաշրջումներից հույսը կտրել և հաստ-
րակության հիմնական վերանորոգում եր պահանջում, այն
պահին կոմունիստական եր կոչվում: Դա լոկ կոպիտ տաշ-
ված, ուսկ բնագդական, յերբեմն բոի կոմունիզմ եր: Սա-
կայն նա բավական զորեղ եր յերկու ռետոպիտական-կոմու-
նիստական սիստեմ ստեղծելու համար, Ֆրանսիայում—
Կարեյի «Բիկարական» ռւսմունքը, Գիրմանիայում—Վայո-
լինինը: 1847 թվականին սոցիալիզմ բաժան բուրժուական
շարժում եր, կոմունիզմը—բանվորական: Սոցիալիզմը, զոնե
ցամաքում, սալոնական բնույթը եր կրում, իսկ կոմունիզմը
—դրա հակառակն եր: Յե վորովհետեւ այն ժամանակ արդեն
մենք վճռականորեն այն կարծիքին եյինք, վոր «բանվոր-
ների աղասագորումը բանվոր զառակարգի գործը պիտի
լինի», ուստի և վոչ մի բոսի չեյինը կարող տատանվել,
թե յերկու անունից վորն ընտրենք: Հետօպայում ել մեր
մաքով չի անցել հրաժարվել այդ անունից:

«Պրոլետարներ բոլոր յերկրների—միացեք»:

Սակայ ձայնիր արձագանք տվին ի պատասխան, յերք
մենք այդ խոսքերն աշխարհ նետեցինք սրանից 42 տարի:

առաջ, Փարիզի հեղափոխության նախորյակին, յերք պրո-
լետարիան իր սեփական պահանջներով հանգես յեկավէ:
Սակայն 1864 թվի սեպտեմբերի 28-ին Սրբամայան Յերապա-
յի յերկրների մեծ մասի պրոլետարիատը միացել և փա-
ռապանծ Բանվորական Միջազգային Ընկերությունն եր
հիմնել: Ճիշտ և, «Խնտերնացիոնալը» լոկ իննը տարվան
կյանք ունեցավ: Բայց վոր նրա հաստատեց բոլոր յերկրը-
ների պրոլետարների հավերժական միությունը դեռ կեն-
տանի յե և ապրում և այսոր ավելի զորեց, քան յերեկ-
—զա ամենից լավ այսորվա որն և մկայում: Վորովինեան
հենց այսոր, այս տողերը գրելուս ըստեյին, յերապական և
ամերիկյան պրոլետարիատը զորահանդիս և կազմել իր
առաջին անդամ հավաքած սազմական ուժերի, վոր ի մի-
յեն հավաքվել վորպես մի զորք, մի զրոշակի տակ, մի
զերագույն նպատակի համար Բանվորական ուժեմյա
բնական աշխատաժամն և տակավին 1886 թվին Խնտերնա-
ցիոնալի ժընկի համագումարում հոչակած և ապա 1889
թվի Փարիզի բանվորական համագումարում հայտարարված
այդ նպատակը: Յե այսորվա տեսարանը բոլոր յերկրների
կապիտալիստների և կալվածատերերի աչքը կրանա, վոր-
պեսզի տեսնեն, թե այսոր բոլոր յերկրների պրոլետար-
ներն իրոք միացել են:

Մարքսը պիտի կողքիս կանոնած լիներ, վոր իր
սեփական աչքով տեսներ այդ:

Լոնդոն, 1 մայիսի 1890 թ.

Փ. Խոջելս

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՆԻՖԵՍՏ

Յերոպայում մի ուրվական և շրջում—կոմունիզմի ուրվականը։ Հին Յերոպայի բոլոր ուժերը համախմբվել ու սրբազան հալածանք են հարուցել այդ ուրվականի դեմ—պապն ու ցարը, Մետերնիխն* ու Գիգոն**, ֆրանսիական արմատականներն ու գերմանական վոստիկանները։

* Մետերնիխը 1809 թվականից մինչև 1848 թիվը Ավստրիայի արտաքին գործոց մինիստրն է յեղել։ 1815 թ. սուսաց (Նիկոլայ Ա.), ավստրիական և պրուսական թագավորները Փարիզում կնքեցին այսպես կոչված «Սրբազան դաշնակցությունը», վորը կոչված եր միջամտել ուրիշ պետական մորթյունների ներքին գործերին՝ ազատագրական և հեղափոխական շարժումները ձնշելու նպատակով։ Մետերնիխը՝ այդ «Սրբազան դաշնակցության» հոգին, պաշտպանում եր Տաճկառանը հույների ապստամբության ժամանակ, հալածում հեղափոխական շարժումը Ավստրիայում, իտալիայում, Հոգանիայում և այլն նրան տապալից 1848 թվականի հեղափոխությունը։ Ծանոթ. Պ. Մ.

** Գիգոն ֆրանսիական հայտնի քաղաքական գործիչ և պատմաբան է։ Լինելով միապետական-սահմանադրական, (այսինքն՝ կագետ) նա խոշոր բուրժուազիայի շահերի պաշտպանն և հանդիսացել։ Զանազան ժամանակ յեղել է լուսավորության և արտաքին գործոց մինիստր, իսկ 1847 թվականին (Մանիքեստի լույս տեսած տարին)՝ պրեմիեր։ Պրուսական կառավարության պահանջով Գիգոն արտաքսեց կ. Մարքսին Փարիզից։ Նրա կառավարության նեղ-բուրժուական և բյուրոկրատիկան ընույթը 1848 թ. հեղափոխության շարժումիթներից մեկն եր։ Ծանոթ. Պ. Մ.

Վորն և այն գիմաղիք կուսակցությունը, վոր կառավար (regierend, ուժապահ) հակառակորդների կողմից կոմունիստական հոչակված չլիներ: Վորն և այն գիմաղիք կուսակցությունը, վոր կոմունիզմի անվանարկու մեղադրանքը յետ շպրտած չլիներ թե իրենից ավելի առաջադեմ գիմաղիքների, թե իր յետագեմ հակառակորդների յերիսին:

Այս փաստից յերկու յեղբակացություն երդիւմ:

Բոլոր յերազական պետությունների կողմից կոմունիզմն արդեն ճանաչված է իրեւ ույժ:

Պատեհ է արդեն, վոր կոմունիստներն իրենց հայեցակերպը, նովառակներն ու ձգտումները հանդեռ բերեն արար-տշաբրհի առջե և կոմունիզմի ուրիշ կանի մասին շրջող հեքիաթներին կուսակցության խնկ Մանիքիստը հակադրեն:

Ահա այդ նպատակով մենք, բազմազան ազգերի կոմունիստներս, հովաքվեցինք Լոնդոնում և մշակեցինք հետեւյալ Մանիքիստը, վոր հրատարակիւու յետ անդիներեն, ֆրանսերեն, վերմաներեն, խոալերեն, ֆամաներեն և գանիներեն լեզուներով:

I

ԲՈՒԻՐԾԱԽԱՆԵՐ ՅԵԿ ՊՐԱԼԵՑԱՐՆԵՐ

Բոլոր մինչայժմյան հասարակությունների պատմությունը* — գոստակարգերի պայքարի պատմություն ե:

Ազան ու ստրուկը, պատրիկն ու պլեբեյը, բարոնն ու ճորտը, համքարն ու քյարզարը, կարձնաշողն ու ճնշվածը միշտ ել իրոր հոկառակ ևն յեղել, անընդհատ պայքար են մեկ իրոր գեմմերթ գաղտնի, մերթ ակնհայտ, մի պայքար, վոր կամ ամբողջ հասարակության հեղափոխական վերա-

* Ավելի ճիշտ՝ այն պատմությունը, վոր մեկ գրավոր կերպով և հասկել: 1847 թվին հասարակության նախավատմությունը, նրա հասարակական կազմը, վոր նախորդում և ամեն մի գրավոր պատմություն, զրկի միանգամայն անհայտ եր հետո միայն Հաքսահառզենը հայանագործեց հողի համայնական արիստությունը Բուսաստանում, իսկ Մաուրերն ապացուցեց, վոր զա յեղել և նայե բոլոր գերմանական ցեղերի հասարակության հիմքն ու պատմություն յելակիտը: Ապա թե զոտն, վոր համայնական հողատիրությունը Հնդկաստանից մինչեւ Երևանդիա գյուղական հասարակությունների նախնական կազմն և յեղելք վերջապես Մորդանի արած զյուտի շնորհիվ, առնմի խնկական բնույթի մասին և տոհմի ցեղի մեջ բռնած տեղի մասին, զրահվորքից այդ նախնական կոմունիստական հասարակության ներքին կազմակերպությունն իր տէպական ձևով: Այդ նախնական հասարակության կազմաբաժման հետ սկսվում է հասարակության շերտավորումը տարրեր և բնակչություն հակադիր գոստակարգերի:

նորոգումով եւ վերջացել, կամ պայքարող դասակարգերի միասնական կործանումով։

Պատմության նախընթաց շրջաններում մենք գրեթե ամենուրեք գտնում ենք հասարակությունն անգամազատված աւարբեր դասերի, հասարակական դիրքերի բազմապիսի աստիճաններ։ Հին Հռոմում՝ պատրիկներ, ասպետներ, պիերեյներ և սուրուկներ, միջնադարում՝ ավատատերեր, վասարչներ, համքարչներ, քարդարներ և ճորտեր, Յեզ այդ դասակարգերից յուրաքանչյուրը դարձյալ ստորաբաժնութեր և ունեցել։

Կործանված ավատական հասարակությունից յելած արդի բուրժուական հասարակությունն ել դասակարգային ներհակությունը չվերացրեց։ Նա լոկ նոր դասակարգեր, ճնշումի նոր պայմաններ և պայքարի նոր յեղանակներ գրեց հների տեղի

Մեր ժամանակաշրջանը—բուրժուազիայի ժամանակաշրջանը—նրանով եւ սակայն նշանավոր, վոր դասակարգերի հակագրություններին օդարդ ձեւ և տվել։ Ամրող հասարակությունը հետպհետեւ բաժանվում է յերկու մեծ, թշնամի բանակների, յերկու մեծ, ուղղակի գեմ ու զեմ կանգնած դասակարգերի բուրժուազիայի և պրոլետարիատի։

Միջնադարյան ճորտերից սերում եւ նորածագ քաղաքների յեկվորազգաբնակությունը (Pfahlbürger), վորից դարդանում են բուրժուազիայի սկզբնական տարրերը։

Երբ վոր Ամերիկան հայտնագործվեց և գտնվեց շուրջափրիկյան նավազնացության ուղին, նորելուկ բուրժուազիայի առջև նոր տապարեղ բացվեց։ Արևելքուն Հնդկաստանի և Չինաստանի շուկաները, զաղթը

գծակի Ամերիկա (Ամերիկայի կողմնիզացիան), փոքանակությունը գաղութների հետ, փոխի միջոցների և ընդհանրապես ապրանքների բազմանալը, — զարկ տվին առևտորի, նավարկության և արդյունագործության տակավին չտեսնված բարզավաճման և դրա հորհիվ քայլայվող ավատական հասարակության մեջ հեղափոխական տարրերի արագ զարգացման։

Ավատական կամ համքարային արդյունագործության արտադրության մինչ այդ դոյցություն ունեցած յեղանակը նոր շուկաների շնորհիվ աճած պահանջին այլևս չեր բավարարում։ Երա տեղը բռնեց մանուքակտուրան։ Արդյունագործական միջին դասը վանեց համքարներին։ Աշխատանքի բաժանումը զանազան համքարությունների միջև տեղի տվեց աշխատանքի բաժանումին յուրաքանչյուր արհետանոցում։

Սակայն շուկան շարունակ աճում եր, պահանջն անընդհատ ավելանում։ Մանուքակտուրան ել այլևս չեր կարողանում բավարարել Յեզ անա շուկին ու մեջենան հեղափոխեցին արդյունագործության արտադրությունը։ Մանուքակտուրայի տեղը — արդի խոշոր արդյունագործությունը բռնեց, արդյունագործական միջին դասի տեղը — արդյունագործական ամբողջ բանակների ղեկավարները, արդի բուրժուազիան։

Խոշոր արդյունագործությունն ստեղծեց համաշխարհային ջուկան, վոր նախապատրաստված եր Ամերիկայի հայտնագործումով։ Համաշխարհային շուկան անչափ զարգացրեց տունուրը, նույտուկությունը և ցամաքային յերթենեկությունը։ Այդ հանգամանքը յետադարձ ազդեցություն ունեցավ արդյունագործության ծագումն մոտ, և վոր չափով արդյունագոր-

ծությունը, առետուրը, նավարկությունն ու յերկաթուղիներն եյին տարածվում, նույն չափով բուրժուազիան եր զարգանում, բազմապատկում իր կապիտալը և յետ մզում միջնադրախց մնացած բոլոր դասակարգերը:

Այսպիսով մինք տեսնում ենք, վոր արդի բուրժուազիան ինքն ել արդյունք և յերկարատես զարգացման, արտադրության և փոխի յեղանակի միշտը հեղաշրջումների:

Ամեն անգամ այդ զարգացման մի աստիճանից մյուսն անցնելիո՞ւ բուրժուազիան համապատասխան քաղաքական առաջդիմությունն ե արել Բուրժուազիան—ճնշված դաս և յեղել ավատական տերերի տիրապետության ներքո, զինված և ինքնավար ասսոցիացիա (համախմբում) կոմունայում*, այսուեղ՝ անկախ քաղաքային հանրապետություն, այսուեղ՝ միավետության յերրորդ, հարկատու դաս, ապա՝ մանուֆակտուրայի ժամանակաշրջանում, դասային կամ արտոյցուա միապետությունների մեջ—հակակըն ընդդեմ աղնվականության: Բուրժուազիան առհասարակ խոշոր միավետությունների դիմափոր պատվարն ե յեղել խոլ խոշոր արդյունագործություն և համաշխարհային շուկաներ հաստատելուց հետո, արդի ներկայացուցչական պետության մեջ, նա վերջապես բացառիկ քաղաքական իշխանությունն ե նվաճել: Արդի պետական իշխանությունը լոկ մի կոմիտե յե, վոր վողջ բուրժուա դասակարգի հաստարական գործերն ե վարում:

* Ավատառերերից փողով կամ ուժով ինքնավարության իրավունք ձևոք բերելուց հետո՝ Բարիալի և Ֆրանսիայի քաղաքային արտաշարժ-սենտիմենտալ քողը պատռեց և նրանց զուտ փողային հարաբերությունների վերածեց:

Բուրժուազիան պատմության մեջ վերին աստիճանի հեղափոխական դեր ե կատարել:

Բուրժուազիան, վորանդ տիրապետության ե հասել, խորտակել ե բոլոր ավատական, նահապետական, հովվերգական հարաբերությունները: Ավատական խայտաբղետ կապերը, վորոնք կապում եյին մարդկանց իրենց բնական մեծավորներին, նա անողոքաբար կտրտեց և մարդկանց միջն բացի մերկ շահից, բացի անզգա «նազդ փողից» վոշինչ այլ կապ վթողեց: Բարեպաշտ անուրջի սրբազն դողը, ասպետական վագեորությունն ու քաղքենի թախիծը նախեղգեց յեսամոլ հաշվի սառցածրի մեջ: Անհատական արժանապատվությունը նա փոխարժեքի վերածեց, թղթով շնորհած և անձամբ ձեռք բերած անթիվ պատությունների տեղ—մի հատիկ, անխիղճ, առետրի աղատություն զրեց: Մի խոսքով կրոնական և քաղաքական պատրաներներով քողարկված շահագործումի տեղ—ափաշկարա, անտմոթ, անմիջական, կոշտ ու կոպիտ շահագործում զրեց:

Բուրժուազիան զործունեյությունների բոլոր տեսակները, վորոնք մինչ այդ ակնածություն ու պատկառանք եյին վայելում, զրկեց հմայքից: Բժշկին, իրավաբանին, քահանային, պոետին, պիտնականին նա իր վարձու բանվորները դարձրեց:

Բուրժուազիան ընտանեկան հարաբերությունների սրտաշարժ-սենտիմենտալ քողը պատռեց և նրանց զուտ փողային հարաբերությունների վերածեց:

Բուրժուազիան մերկացրեց թե ինչպես բիրտումի արտահայտությունը, վորով անքան հիանում էն միջնադրը դիտող յետակիմականները, իրեն

համապտուասխան լրացում և գտնում ծույլ-անշաբ-
ժության և ձրիակերության մեջ:

Առաջին անգամ նա ցույց տվեց, թե ինչեր կա-
րող ե գլուխ քերել մարդուս գործունեյությունը:
Նա ստեղծագործեց բոլորովին այլ հրաշալիքներ,
քան յեզիստական բուրգերը, հոռմեյական ջրմուգ-
ները և գոթական տաճարները, նաև միանգամայն
այլ արշավանքներ վարեց, քան ազգերի զաղթը և
խաչակրաց արշավանքները:

Բուրժուազիան չի կարող գոյություն ունենալ
առանց արտադրության գործիքների, նետեապես և
արտադրական հարաբերությունների, նետեապես և
հասարակական բոլոր հարաբերությունների անընդ-
հատ հեղափոխաման: Ընդհակառակ՝ արտադրության
հին յեզանակների անփոփոխ պահպանելու պահանջը
—բոլոր նախընթաց արդյունագործական զասակար-
գերի գոյության առաջին պայմանն ե յեղել Բոլոր
այլ ժամանակաշրջաններից բուրժուականը զանա-
զանվում ե արտադրության անդադրում հեղաշրջու-
մով, հասարակական բոլոր կացությունների անընդ-
հատ սասանումով, մշտական անտպահովությամբ ու
շարժումով: Բոլոր ամուր, ժանգոտ հարաբերություն-
ներն իրենց ուղեկցող հնագարյան մտապատկերնե-
րով ու հայացքներով տարբալուծվում են, բոլոր
նորակազմերը, դեռևս չամրապնդած՝ հնանում: Այն
ամենը, ինչ զասային ե և անշարժ, գոլորշիանում ե,
բոլոր սրբությունները — պղծվում են և մարդիկ վերջ
ի վերջո հարկադրվում են իրենց կենսական դիրքին,
իրենց փոխարձ հարաբերություններին դզաստ
աշբով նայելու:

Իր ապրանքների սպառավայրն ընդունելու

պահանջը մզում և բուրժուազիային յերկրագունդն
ի վեր: Ամեն տեղ բան և գնում նա, ամենուրեք
ընակություն և կապեր հաստատում:

Բուրժուազիան, համաշխարհային շուկաները
շահագործելով՝ բոլոր յերկրների արտադրությունն
ու սպառումը կամոպովիտաբար և կազմակերպում:
Ի մեծ վիշտ յետաղիմականների արդյունագործու-
թյան վոտի տակից նա խլեց ազգային հողը: Նախ-
նական ազգային արդյունագործությունները մասամբ
վոչնչացել, մասամբ որ ըստ որե վոչնչանում են:
Նրանց տեղը նորանոր արդյունագործություններ են
բռնում, վորոնց ներմուծումը բոլոր քաղաքակիրթ
ազգերի համար կյանքի և մահու խնդիր և դառնում:
Արդյունագործություններ, վորոնք վճչ միայն անդա-
կան հում նյութեր են մշակում, այլ և յերկրադնդի
ամենահեռավոր գոտիների հում նյութերը և վորոնց
ֆարբիկատները վոչ միայն իրանց յերկրամ են
սպառվում, այլ և աշխարհի բոլոր մասերում: Հին,
տեղական արտադրությամբ բավարարվող կարիքների
տեղը նորերն են բռնում, վորոնք իրենց բավարար-
ման համար ամենահեռավոր յերկրների և կիմա-
ների պրոցուկտներն են պահանջում: Հին, տեղական
և ազգային ինքնաբավրարման և ինքնամփոփման
տեղը բռնում են բազմակողմանի հարաբերություն-
ներ, ազգերի բազմակողմանի կախում իրարից: Յեզ
դա այդպես և հոգեսր տրադադրության նկատմամբ,
ինչպես նյութական: Հատ-հատ ազգերի հոգեսր
արտադրությունները — հանրային բարիքներ են զա-
նում: Ազգային միակողմանիությունն ու սահման-
փակությունը, քանի զնում, այնքան անհար են
գառնում, և բազմաթիվ ազգային ու տեղական

գրականություններից միասնական համաշխարհային գրականություն և գոյանում:

Բուրժուազիան, արտադրության բոլոր գործիքների արագ բարելավումով, յերթևեկության անվերջ զյուրացումով, գեղի քաղաքակրթություն և մտում բոլոր ազգերին, անգամ ամենաբարբարուներին: Ապրանքների եժան գները—նրա ծանր արակերիան եւ, վորով նա հիմնահատակ է անում բոլոր շինական պատերը և բարբարուների ամենահատակող ոտարակեցությունը ստիպում է անձնատուր լինել: Նա հարկադրում է, վոր բոլոր ազգերը, յեթե չեն ուզում կործանվել, յուրացնեն արտադրության բուրժուական յեղանակը: Նա ստիպում է, վոր նրանք իրենց մեջ այսպես կոչված քաղաքակրթություն մտցնեն, այսինքն՝ բուրժուականությունը իր խոսքով՝ նա իր համար մի նոր աշխարհ է ստեղծագործում ըստ իր սեփական պատկերի:

Բուրժուազիան զյուղը քաղաքի աիրավետության յենթարկեց: Նա հսկայական քաղաքներ եւ ստեղծել, քաղաքի ազգաբնակությունը նա ծայր աստիճան բազմացրել եւ ի հաշիվ զյուղերի և դրանով ազգաբնակության նշանագոր մասը պակել զյուղական ապուշ կյանքից: Յեվ ինչպես նա զյուղն է քաղաքից կախման մեջ դրել, այնպես ել բարբարոս ու կիսաբարբարոս յերկրներն եւ յենթարկել քաղաքակրթներին, զյուղացի ժողովրդները բուրժուականներին, Արևելքը—Արևմուտքին:

Բուրժուազիան արտադրության միջոցների, սեփականության և ազգաբնակության ցրվածությունը ավելի ու ավելի վերացնում է: Նա ժողովել եւ ազգաբնակությունը, կենտրոնացրել արտադրության

միջոցները և սեփականությունը սակավաթիվ ձեռքբուժ, Դրա անհրաժեշտ հետեւանքը քաղաքական կենտրոնացումը յեղավ: Տարբեր շահերով, որենքներով, կառավարություններով և մաքսերով, անկախ, գրեթե լոկ դաշնակցող գավառները նա կցեց իրար, մի ազգ, մի կառավարություն, մի որենք, մի ազգային գասակարգային շահ, մի մաքսային գիծ ստեղծեց:

Բուրժուազիան իր գասակարգային հազիվ հարյուրամյա տիրապետության ընթացքում ավելի քաղմաթիվ և վիթխարի արտազիր ուժեր սաեղծեց, քան բոլոր նախընթաց սերունդները միանին, Բնական ուժերի նվաճումը, մեքենաները, քիմիայի կիրարկումը արդյունավործության և հողագործության մեջ, շոգենավարկությունը, յերկաթուղիները, յելերտրական հեռաշուրջները, ամբողջ աշխարհամասերի մշակումը, գետերի հարմարացումը նավազնացության համար, անես զետնի տակից դուրս բերած ամբողջ ժողովուրդներ... Նախընթաց գարերում վորի մտքովը կանցներ, թե հասարակական աշխատանքի ծոցում այդքան արտադրել ուժեր են նիրհում:

Արդ՝ մենք տեսանք—արտադրության և շրջանառության միջոցները,—այս հողը, վորի վրա սաղմնավորվեց բուրժուազիան—ավատական հասարակությունն իր արտադրել: Արտադրության և շրջանառության այս միջոցների զարգացման վորոշ աստիճանի վրա, ավատական հասարակության արտադրական և փոխի հարաբերությունները, յերկրագործության և մանուֆակտուրայի, արդյունագործության ավատական կազմակերպությունը, մի խոսքով

սեփականության ավատական հարաբերությունները — արդին զարգացած արտադիր ուժերին — այլև զարգարեցին համապատասխանելուց։ Նրանք կաշեանդում եյին արտադրության զարգացումը, նպաստելու փոխարեն։ Արտադրության համար նրանք բաղմաթիկ կապանքներ դառնան։ Նրանք պիտի խորտակվեյին և խորտակվեցին։

Նրանց տեղը բռնեց ազատ մրցությունը, իրեն համապատասխան հասարակական և քաղաքական կազմով, բուրժուական դաստկարդի անտեսական և քաղաքական տիրապետությամբ։

Մեր աչքի առջև տեղի ունի նման մի շարժում։ Արտադրության և շրջանառության միջոցների բուրժուական հարաբերությունները, բուրժուազիայի սեփականատիրական հարաբերությունները, արդի բուրժուական հասարակությունը, վոր՝ արտադրության և շրջանառության այսքան զորեղ միջոցներ և դուրս կոչել, նման և այն կախարդասպեաին, վոր այլևս չի կարողանում իշխել իր խոկ դուրս կոչած ստորերկրյա ուժերին։ Արդյունաբերության և տուարի պատմությունը տասնյակ տարիներից ի վեր արդի արտադիր ուժերի ըմբռոտացման պատմությունն և լոկ ընդդեմ արտադրության արդի հարաբերությունների, ընդդեմ սեփականատիրական հարաբերությունների, բուրժուազիայի տիրապետության այդ կենսական պայմանների դեմ։ Բավական և հիշատակել առետրական ճգնաժամերը, վոր իրենց պարբերական վերագրածով քանի գնում, ավելի սպառնում են բուրժուական սեփականության գոյությանը։ Բուրժուական հարաբերությունները չափազանց նեղ են իրենց իսկ արտադրած հարստությունն ընդդրկելու համար։ Ինչպես և ապա բուրժուազիան ճգնաժամերը հաղթահարում։ Մի կողմէց՝ հարկադրաբար մեծ քանակությամբ արտադրական ուժեր վոչնչացնելով, մյուս կողմից՝ նոր շուկաների նվաճումով և ների ավելի հիմնական շահագործումով։ Ինչպես ուրեմն։ Այսպես, վոր ավելի բազմակողմանի և

արդեն ստեղծված արտադիր ուժերի մեծ մասն և անընդհան վոչնչանում։ Ճգնաժամերի միջոցին բռնկում ե հասարակական մի համաձարակ, վոր բոլոր նախընթաց ժամանակաշրջանում անհեթեթ կթվար—գերարտադրության համաձարակը։ Հանկարծակի հասարակությունը դանում ե իրեն յետ նետված առժամյա բարբարոս կացության մեջ։ Ասես մի սովոր, մի համատարած ավերիչ պատերազմ կտրած մինի նրա ապրուստի բոլոր միջոցները։ Կարծես արդյունագործությունը, առետուրը վոչնչացած լինեն։ Յեկ ինչու։ Վորովինետե հասարակությունն ավելի քան շատ քաղաքակրթություն, ապրուստի միջոցներ, արդյունագործություն և առետուրը ունի։ Նրա տրամադրության ներքո գտնված արտադիր ուժերն այլիս բուրժուազիայի սեփականատիրական հարաբերությունների առաջխաղացմանը չեն նպաստում։ Ընդհակառակը՝ նրանք այդ հարաբերությունների համար ավելի քան զորեղ են, կաշեանդվում են նրանցից և հենց վոր նրանք հաղթահարում են այդ կապանքները, իսկույն վողջ բուրժուական հասարակությունն անկարգության մեջ են քցում։ Նրանք սպառնում են բուրժուական սեփականության գոյությանը։ Բուրժուական հարաբերությունները չափազանց նեղ են իրենց իսկ արտադրած հարստությունն ընդդրկելու համար։ Ինչպես և ապա բուրժուազիան ճգնաժամերը հաղթահարում։ Մի կողմէց՝ հարկադրաբար մեծ քանակությամբ արտադրական ուժեր վոչնչացնելով, մյուս կողմից՝ նոր շուկաների նվաճումով և ների ավելի հիմնական շահագործումով։ Ինչպես ուրեմն։ Այսպես, վոր ավելի բազմակողմանի և

ուժզին ճգնաժամեր և նախավատքաստում և պականացնում նրանցից խուսափելու միջոցները:

Այն զենքերը, վորոնցով բուրժուազիան հողին հավասարեցրեց տվատականությունը, այժմ հենց բուրժուազիայի դեմ են ուղղվում:

Սակայն բուրժուազիան վոչ միայն այն զենքերն ե կռել, վոր իրեն մահ պիտի բերեն, նա ծնել ե նայե այն մարդկանց, վոր այդ զենքերը պիտի կրեն, — արդի բանվորներին, պրոեւտացներին:

Այնչափ, վորչափ բուրժուազիան, այսինքն կապիտալը զարգանում ե, զարգանում և նայե պրոլետարիատը, արդի բանվորների դաստկարզը, վոր ապրում ե, քանի աշխատանք և գանում և աշխատանք և գանում, քանի նրա աշխատանքը բաղմապատկում ե կապիտալը: Այդ բանվորները, վոր հարկադրված են իրենք իրենց հատավաճառով ծախելու, ապրանք են, ինչպես ամեն մի ուրիշ առետրի առարկա, ուստի նմանապես յենթարկված են մրցման պատճականություններին և շուկայի բոլոր տատոննումներին:

Պրոլետարների աշխատանքը, շնորհիվ մեքենաների տարածման և աշխատանքի բաժանման, միանգամայն կորցրել ե իր ինքնուրույն ընույթը և զրահետ միասին ամեն մի հրապույր աշխատողի համար: Բանվորը պարզապես դառնում է մեքենայի կցմրզը, վորից միայն ամենահասարակ, ամենամիորինակ և ամենազյուրին կերպով ուսումնասիրվող ձեռքի շարժումներ են պահանջում: Ուստի և բանվորի վրա արած ծախսը սահմանափակվում է գրեթե նրանով, ինչ պետք ե լոկ նրա ապրուստի համար, ինչ պետք ե նրան իր կյանքը պահպանելու և իր սերունդը

շարունակելու համար: Իսկ ապրանքի, հետևապես նայե աշխատանքի գինը, հավասար ե նրա արտադրության ծախսին: Ուստի վորքան ավելի յե զգվելի գանում աշխատանքը, այնքան ավելի յե ընկնում նրա վարձը: Դեռ ավելին ինչ չափով մեքենաների զարգացումն ու աշխատանքի բաժանումն են առաջ գնում, այն չափով աճում ե աշխատանքի ծանրությունը, լինի դա շնորհիվ աշխատաժամի հավելման, թե տվյալ ժամի ընթացքում շնորհիվ բանվորից պահանջվող աշխատանքի լարումի, վոր առաջ և գալիս մեքենաների շարժընթացքի արագացման միջոցով և այլն:

Արդի արդյունագործությունը նահապետական վարպետի վորքիկ արհեստանոցը վերածեց կապիտալիստի խոշոր գործարանի: Բանվորների բազմությունը խոնված գործարանում կազմակերպվում ե զինվորների պես: Իրեն արդյունագործության հասուրակ զինվորներ նրանք յենթառապաների և սպաների մի կատարյալ յերարխիացի հսկողության են յենթարկվում: Նրանք վոչ միայն բուրժուազարդի, բուրժուական պետության ստրուկներն են գտնում, նրանք ամեն որ, ամեն ժամ ստրկանում են մեքենաներին, վերակացուներին և, ամենից առաջ, առանձին-առանձին գործարանատեր բուրժուաներին: Այդ բանապետությունն այնքան ավելի վորքողի, զգվելի և գառնացուցիչ ե, վորքան ավելի պարզ և շահը բացահայտվում իրեն նպատակ:

Վորքան ձեռքի աշխատանքն ավելի քիչ ձկունություն և ույժ և պահանջում, այսինքն՝ վորքան ավելի յե զարգանում արդի արդյունագործությունը այնքան ավելի տղամարդկանց աշխատանքի տեղը,

կանաց աշխատանքն եւ բռնում։ Սեռի և հասակի տարբերությունները բանվոր դասակարգի համար այլս վոչ մի հասարակական նշանակություն չունեն։ Կան միայն աշխատանքի մեքենաներ, վորոնք ըստ հասակի և սեռի տարբեր ծախս են նստում։

Հենց վոր բանվորի շահագործումը զործարանատիրոջ միջոցով այն տեղն եւ հասնում, վոր նա ստանում եւ իր կանխիկ համբած աշխատավարձը, իսկուցն և եթ վրա յէ տալիս բուրժուազիայի մյուս մասը՝ տանտերը, խանութպանը, վաշխառումն և այլն։

Մինչայժմյան միջին դասերը—մանր արդյունագործողները, վաճառականներն ու ռենտատերերերը, արիեստավորներն ու պյուղացիները—բոլոր այս դասակարգերը պըրոլետարության մեջ են ընկնում, մասամբ նրանից, վոր խոշոր արդյունադործական արտադրության համար նրանց կապիտալը հերիք չ' անում և ավելի խոշոր կապիտալիստների մրցմանը չեն զիմանում, մասամբ ել նրանից, վոր նրանց հմտությունը չնորհիվ արտադրական նոր յեղանակների կորցնում եւ իր արժեքը։ Այսպիսով պըրոլետարիատը գոյանում եւ ազգաբնակության բոլոր դասակարգերից։

Պըրոլետարիատը գարգացման զանազան աստիճաններ եւ անցնում։ Նրա պայքարը բուրժուազիայի դեմ սկսվում եւ նրա գոյության առաջին որից։

Սկզբում հատ-հատ բանվորներ են մաքառում, ապա՝ վորեւե դործարանի բանվորները միասին, ապա թե՝ աշխատանքի վորեն ճյուղի բանվորները մի վայրում ընդդեմ այս կամ այն բուրժուազի, վորը նրանց անմիջապես շահագործում եւ նրանք իրենց հարվածը վոչ միայն բուրժուական արտադրական

պայմանների դեմ են ուղղում, այլ և արտադրության գործիքների դեմ։ Նրանք վոչնչացնում են մըցող ուսար աղբանքները, ջարդում մեքենաները, հրդեհում գործարանները, նրանք փորձ են անում վերստին համել միջնադարյան բանվորների խոփակուծ վիճակին։

Այդ աստիճանի վրա բանվորները ցըկած են աշխարհի յերեսին և, մըցման պատճառով, իրարից անջատված զանգված են կազմում։

Բանվորների մասսայական միաբանությունն ել իրենց սեփական միության հետեանքը չի, այլ հետեանք եւ բուրժուազիայի միացման, վոր իր սեփական քաղաքական նովատակներին հառնելու համար հարկադրված եւ լինում և յերբեմն կարողանում եւ ամբողջ պըրոլետարիատը շարժման մեջ զնել։ Ուրեմն այդ աստիճանի վրա պըրոլետարիատը վոչ թե իր թշնամիների դեմ եւ մաքառում, այլ իր թշնամիների թշնամիների դեմ, արտոյուա միապետության ձևացորդների, կալվածատերերի, վոչ-արդյունագործական բուրժուազիայի և մանր-բուրժուազիայի դեմ։ Այդպիսով՝ վողջ պատմական շարժումը բուրժուազիայի ձեռքումն եւ կենտրոնանում։ Այդ յեղանակով տարած ամեն մի հաղթանակ—բուրժուազիայի հաղթանակն եւ

Սակայն արդյունաբերության զարգացման հետ պըրոլետարիատը վոչ միայն բաղմանում եւ, նա ավելի խոշոր համախմբումներ եւ կազմում, նրա ույժը աճում եւ նա ինքն այդ բանը քանի զնում ավելի յէ զգում։ Քանի մեքենաներն ավելի յեն հարթում աշխատանքի բոլոր ճյուղերի տարբերությունները և վորքան ավելի զրեթե ամենուր աշխատավարձը նման ցած մակարդակի վրա յէ իջնում, — այնքան

ավելի պրոլետարների շահերն ու կենսական պիճակը միանման են դառնում, Բուրժուաների աճող մրցումը իրար հետ և դրանից առաջ յեկած առևտրական ճգնաժամերը բանվորների աշխատավարձը շարունակ ավելի և ավելի անհաստատ են դարձնում: Մեքենաների շարունակ ավելի և ավելի արտգ զարգացումն ու անընդհատ կատարելագործումը բանվորների ապրուստն ավելի և ավելի անսալահով են դարձնում: Հատ ու կենա բանվորների և բուրժուաների միջև ընդհարումը քանի գնում ավելի յէ յերկու դասակարգերի բաղմումի բնույթը ընդունում: Բանվորներն սկսում են նրանից, վոր միանում են բուրժուազիայի դեմ: Նրանք յեխում են միասին իրենց աշխատավարձն անկումից սպաշտապանելու համար: Նրանք անդամ տեսական ընկերություններ են հիմում, վորպեսզի հնարավոր բռնկումների միջոցին իրենց նյութապես ոժանդակած լինեն: Տեղ-տեղ պայքարը պոռթկում ե ապստամբության յեզանակավ:

Ժամանակ առ ժամանակ բանվորները հաղթում են, սակայն լոկ անցողակի և կապես նըրանց պայքարի հետևանքը վոչ թե անմիջական հաջողությունն ե, այլ բանվորների միշտ ավելի լայն ծավալվող միությունը: Խոշոր արդյունագործության արտազգած յերթիեկության միջոցների աճումը դալիս և զանազան վայրերի բանվորներին շաղկապելու իրար: // Սակայն բավական ե լոկ այդ կապը, վոր բազմաթիվ տեղական, բայց ամենուր նման երեւյթ կրող պայքարները — ազգային, դասակարգային պայքար դառնան: Սակայն ամեն մի դասակարգային պայքար — քաղաքական պայքար ե, Յեկայն միությունը, վոր միջնադարյան քաղաքացիները, սալլուպիների տիրա-

պետության շրջանում, դարերի ընթացքում միայն զլուկ բերին, արգի պրոլետարիատը, յերկաթուղիների միջոցով; սակայ տարիների ընթացքում ե զլուկ բերում:

Պրոլետարիատի այդ կազմակերպումը իրոկ դասակարգի և զբա հետ նայել իրեն քաղաքական կուսակցության — յուրաքանչյուր ակնթարթ հօդու ե ցնդում բանվորների միջև յեղած մրցման պատճառով: Սակայն կազմակերպությունը նորից ուսուց ե գոլիս, ավելի զորեղ, ամուր և կուռ: Նա որենքի ձևով ճանաչել և տալիս բանվորների մասնակի շահերը, ոգտագործելով բուրժուազիայի ներքին պատակումները: Արինակ՝ տասժամցա աշխատանքի որենքն (բիլլ) Անդիայում:

33438
ՀՀՀ

Ասեաստրակ հին հասարակության ներքին բաղխումները մեծապես նպաստում են պրոլետարիատի զարգացման ընթացքին: Բուրժուազիան անընդհատ պայքարի մեջ ե, սկզբում՝ ազնվականության դեմ, ավելի ուշ՝ ընդդեմ նույն բուրժուազիայի մի մասի, վորի շահերին հակասում և խոշոր արդյունագործության առաջնադաշտումը և մշտառիս՝ ընդդեմ ոտար յերկրների բուրժուազիաների: Այդ բոլոր ոլոյքարների միջոցին նա հարկադրված ե վնում գիմել պրոլետարիատին, նրա ովհությունը հայցել և զբանով նրան քաղաքական շարժմանը մասնակից անել:

Այդպիսով նա ինքն ե իր սեփական կրթության տարրերը հաղորդում պրոլետարիատին, այսինքն՝ զենք տալիս ինքն իր գեմ:

Անուհետե, ինչպես մինք տեսանք, արդյունագործության առաջնադաշտումն իշխաղ դասակարգի ամրոց մասնիկները նետում ե պրոլետարիատի ծոցը

կամ առնվազն սպասնում ե զրկել նրանց ապրուսափ պայմաններից։ Նրանք ել են պրոլետարիատի մեջ կրթության բազմաթիվ տարրեր մտցնում։

Վերջապես, յերբ վոր դասակարգային պայքարը մերձնում է իր վճռական վայրկյանին, իշխող դասակարգի մեջ, ամբողջ հին հասարակության մեջ, քայլայման պրոցեսն այնպիսի ստոտիկ ու ուռը բնույթ և ստանում, վոր տիրապետող դասակարգի մի վորք մասն անջտավում է նրանից և միանում հեղափոխական դասակարգին, այն դասակարգին, վոր իր ձեռքին և կրում ապագան։ Յեվ ինչպես առաջ ներում ազնվականության մի մասը բուրժուազիայի կողմն անցավ, այնպես ել այժմ բուրժուազիայի մի մասը պրոլետարիատի կողմն և անցնում, մասնավանդ՝ բուրժուական դաշտիարախոսների մի մասը, վոր մտավոր աշխատանքով հասել և հասարակական ամբողջ շարժման աետական ըմբռնումին։

Սյուր բուրժուազիայի հանդեպ կանգնած բոլոր դասակարգերից միմիայն պրոլետարիատն և իրոք հեղափոխական դասակարգը։ Մնացյալ դասակարգերը քայլայվում ու կործանվում են խոշոր արդյունադործության դարդացումից, պրոլետարիատը՝ հենց սրա հատուկ արդյունքն է։

Միջին դասերը—մանր արգյունագործակները, մանր առևտրականը, արհետամուրը, զյուղացին—բոլորն ել մաքառում են բուրժուազիայի դեմ, վորպեսզի իրենց գոյությունը, իրքի միջին դասակարգերի—կործանումից պահպաննեն։ Ուստի նրանք հեղափոխական չեն, այլ պահպանողական։ Ավելին՝ նրանք յետադիմականներ են, նրանք փորձում են պատմության սնիվը յետ պտացնել, Յեթե նրանք

նեղափոխական են՝ ապա իրենց սպասող պրոլետարցման նկատումով։ և այդ գեղքում նրանք վոչ թե իրենց ներկա, այլ ապագա շահերն են պաշտպանում, նրանք թողնում են իրենց սեփական հաւեցակետը, պրոլետարականի վրա կանգնելու համար։

Լումպենպրոլետարիատը* հին հասարակության ամենախոնարհ խավերի կրավորական նեխվածքը, շնորհիվ պրոլետարական հեղափոխության, տեղատեղ շգրտում և շարժման մեջ, թեյև նրա կյանքի բոլոր պայմանները արամազրում են նրան ավելի շուտ վաճառվել հետաղիմականներին։

Հին հասարակության կյանքի պայմանները պրոլետարիատի կյանքի պայմաններում արգեն վոչնչացել են՝ պրոլետարիատը—սեփականազուրկ և Նրա հարաբերությունները գեպի կինն ու յերեխանները վոչնչաց նման չեն բուրժուական ընտանեկան հաշարերություններին։ Արդի արդյունազործական աշխատանքը, կապիտալի արդի լուծը, — Անզիիայում նույնն է, ինչ վոր Ֆրանսիայում, Ամերիկայում սույնը, ինչ Գերմանիայում, — բանվորների բոլոր սպային գծերը չնշում են։ Որենքները, բարոյականությունը, կըսնը նրա համար նույն բազմաթիվ բուրժուական նախազարմունքներն են, փորսնց յետեր նույնքան բազմաթիվ բուրժուական շահեր են թագնված։

Առաջներում բոլոր դասակարգերը, վոր տիրապետություն եյին նվաճում, աշխատում եյին իրենց պրաված կենսական դիրքն ապահովել, միաժամանակ

* Լումպենպրոլետարիան ցնցոտի, լումպենպրայետար—մուրացկանություն անող, պարապ-ստրապ մարդ, բայրակչ շափիսուն։

վողջ հասարակությունը յենթարկում նյին էրենց շահվելու պայմաններին, Պրոլետարները կարող են հասարակական արտադիր ուժնը նվաճել միմիայն միաժամանակ վերացնելով իրենց սեփական մինչ այդ շահվելու յեղանակը և միաժամանակ շահվելու բոլոր նախկին յեղանակները Պրոլետարներն ազարություններին յեղանակները նրանք զայիս են փըրելու հոգելու բան չունեն, նրանք զայիս են փըրելու մինչայժմյան մասնավոր տպահովությունն ու մասնավոր առանձումը:

Մինչայժմյան բոլոր շարժումները — փոքրամասնությունների շարժումներ են յեղել կամ հոգութ փոքրամասնությունների, Պրոլետարական շարժումը վիթխարի մեծամասնության ինքնուրույն շարժումներ, հոգութ վիթխարի մեծամասնության, Պրոլետարիատը, արդի հասարակության ամենացածր շերտը, չի կարող ինքն իրեն վոչ բարձրացնել, վոչ շիտկեր, առանց հոգս ցնդեցնելու պաշտոնական հասարակություն կազմող վերին շերտը, վերնահարկը:

Պրոլետարիատի պայքարը բուրժուազիայի վեմ թեյև վոչ ըստ բովանդակության, այլ ըստ ձևի, թեյև վոչ ըստ բովանդակության, առաջ աղղային պայքար և Յուրաքանչյուր նախ և առաջ աղղային պայքարի առաջականաբոր նախ իր սեյերկի պրոլետարիատ բնականաբոր նախ իր սեյերկի պրոլետարիատի հախիցը պիտի զա:

Մենք հետեւցինք հասարակության ներսում անեղի ունեցող ավել կամ պակաս շափով թագնվածքաղաքացիական կույին և, նկարազրելով պրոլետարիատի պարզության ամենաընդհանուր փուլերը՝ այն նեղին հասանք, յերբ արդեն բացահայտ հեղափոխություն և բռնկում և պրոլետարիատը բռնի ուժությունն և հաստատում:

Եուրոպ մինչայժմյան հասարակությունները, ինչպես մենք տեսանք, ճնշված և ճնշող դատակարգերի ներհակության վրա յնն հրաված յեղել: Սակայն վորպեսդի հնարավոր լինի մի դատակարգ ճնշելու, պետք և զոր ապահովված լինեն այն պայմանները, փորոնց մեջ այդ դատակարգն առնվազն իր ստրկական գոյությունը կարողանա քաշ տալ Ճորտատիրության շրջանում ճորտից կարող եք կոմունի անդամ գուրու գալ, ինչպես քաղքենիներից — բուրժուական ավատ-արսույուտական լծի տակե Ընդհակառակին արդի բանսվորը, արդյանադործության առաջխաղացման հետ, փոխանակ բարձրանալու, շարունակ իր դատակարգի գոյության պայմաններից ցած և իջնում: Բանվարը — մուրացկան և դառնում և աղքատությունն ազգաբնակությունից ու հարստությունից ավելի արագ և աճում: Յուրաքանչյուր բացահայտ և դառնում, փոր բուրժուազիան այլես անընդունակ և յերկար ժամանակ հասարակության տիրապետող դասակարգը մնալու և իր դասակարգի կենսական պայմանները փաթաթելու հասարակության վզին, իբրև ղեկավար որենք: Նա անընդունակ և իշխելու, վարովինեան անընդունակ և իր սարուկունիքին անդամ ստրկական գոյութիւն ապահովելու, վորովինեան հարկադրված և նրանց այնպիսի դրության հասցնելու, փոր ինքը պիտի նրանց կըրակը կըրակվելու փոխարեն: Հասարակությունն այլես չի կարող նշա տիրապետության ներքո ապրել, այսինքն՝ նրա կյանքն այլես անտառնի յի հասարակության կյանքի համար:

Բուրժուազիայի գոյանալու և ախրապետության ամենաայտական պայմանն և՝ հարստության հավա-

քումը մասնավոր ձեռքերում, կապիտալի դոյացումն ու բազմապատկումը: Կապիտալի պայմանը—վարձուաշխատանքն եւ Վարձու աշխատանքը բացառապես հիմնված եւ բանվորների փոխադարձ մրցման վրա: Արդյունագործության առաջադիմությունը, վորի հլու և կամագուրկ կրողը՝ բուրժուազիան եւ, մրցումով իրարից գաւաված բանվորների տեղը—միությունների միջոցով շաղկապված բանվորների հեղափոխական կաղմակերպություններ եւ դնում: Այսպիսով՝ խոշոք արդյունագործության զարգացման հետ, բուրժուազիայի վոաերի տակից դուրս եւ գալիս այն հողը, վորի վրա նա արտադրում և յուրացնում եւ պրոցուէնները: Նա նախ և առաջ իր սեփական գերեզմանափորներին և արտադրում: Նրա կործանումը և պրոլետարիատի հաղթանակը—հավասարաչափ անխռուսափելի յեն:

II

ՊՐՈԼԵՏԱՐՅԵՐԻ ՅԵՎ ԿԱՄՈՒԽՆԻՍՏԱԿԵՐ

Ընդհանրապես՝ կոմունիստները Բնչ դիրք են բանում գեղի պրոլետարիատը:

Կոմունիստները մի առանձին կուսակցություն չեն կազմում բանվորական այլ կուսակցությունների հանդեպ:

Նրանք բովանդակ պրոլետարիատի շահերից գտաշներ չունեն:

Նրանք չեն առաջադրում ուրույն սկզբունքներ, վորոնց համեմատ կոմննային ձևովորել բանվորական շարժումը:

Կոմունիստները նրանով են տարբերվում այլ պրոլետարական կուսակցություններից, վոր մի կողմից՝ պրոլետարների պես-պես ազգային պայքարների միջոցին նրանք բովանդակ պրոլետարիատի ընդհանուր, ազգություննից սնկախ շահերն են առաջ քաշում ու պաշտպանում, մյուս կողմէց՝ զարգացման զանազան աստիճանների վրա, վորոնցով ընթանում եւ պայքարը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, նրանք միշտ շարժման ամբողջական շահերն են պաշտպանում:

Հետեւըար կոմունիստները—զործնականորեն բոլոր յերկրների բանվորական կուսակցությունների ամենախռովական, շարունակ առաջ ձգտող մասն

են, Պրոլետարիատի մասցյալ զանգվածի համբեռ նրանց առավելությունն այն է, վոր տեսականորեն քմբոնում են պրոլետարիան շարժման պայմանները, ընթացքն ու ընդհանուր հետեանքները:

Կոմունիստների մերձագույն նույնն է, ինչ վոր բոլոր մասցյալ պրոլետարիան կուսակցություններինը—պրոլետարիատի կողմակերպությունը դասակարգի, բուրժուական տիրապետության խորակումը, պրոլետարիատի քաղաքական իշխանության նվաճումը:

Կոմունիստների տեսական գրությունները ընալ են հիմնվում այս կամ այն տվյալնու բարելավողի հարած կամ հայտնագործած գաղափարների սկըզբունքների վրա:

✓ Գոյություն ունեցող իրական հարաբերությունների, դասակարգային պայքարի, մեր աշխի առջև կատարվող պատմական շարժման լոկ ընդհանուր արտօնայտությունն են նրանք: Մինչայժմյան սեփականատիրական հարաբերությունների վերացումը կոմունիզմի համտը հատկապես ընորոշ բան չեւ:

Բոլոր սեփականատիրական հարաբերությունները յենթարկվել են մշտական պատմական փոփոխման, մշտական պատմական տյլակերպման:

✓ Ֆրանսիական հեղափախությունն, որինակ, վերացրեց ավատական սեփականությունը նորութարժուականի:

✓ Կոմունիստների համար ընորոշը վոչ թէ ընդհանրապես սեփականության վերացումն է, այլ բուրժուական սեփականության վերացումը:

Սակայն արդի բուրժուական մասնավոր սեփականությունը վերջին և ամենակատարյալ արտահայ-

տությունն եւ պրոգուկոների արտադրության և յուրացման այն յեղանակի, վոր հիմնված և զառակարգային ներհակության վրա, յերբ վոմանք շահագործում են մյուսներին: Այդ առումով կոմունիստներն իրենց տեսությունը կարող են ամփոփել մի արտահայտության մեջ՝ մասնավոր սեփականության վերացում:

Կոմունիստներիս վրա մեղագրանք են բարդում, իբր թէ մենք ուզում ենք անձամբ վաստակած, սեփական աշխատանքով ձեռք բերած սեփականությունը վերացնել, այն սեփականությունը, վոր ամեն անհատական աղատության, գործունեյություն և անկախության հիմքն է:

Աշխատանձ, վաստակած, անձամբ շահած սեփականությունը Մանր բուրժուաներին, մանր դյուզացիներին սեփականությունից եք խսում զուք, վոր նախորդել եւ բուրժուական սեփականության հարիչ չկա, վոր մենք վերացնենք, քանի վոք արդյունագործության զարգացումն եւ վերացրել և որըսաորեւ վերացնում այն:

Կամ թէ արդի բուրժուաներին մասնավոր սեփականությունից եք խսում զուք:

✓ Սակայն նրանց համար սեփականությունն է արդյոք ստեղծում վարձու աշխատանքը, պրոլետարիատի աշխատանքը: Յեցըք՞ք նա կապիտալ և ստեղծում, այսինքն՝ սեփականություն, վոր շահագործում և վարձու աշխատանքը, վոր կարող և աճել, պայմանով, վոր նոր վարձու աշխատանք արտադրի, նրան գարձյալ շահագործելու համար: Սեփականությունն իր այսորված կերպարանքով կապիտալի և վարձու աշխատանքի ներհակության մեջ և շարժվում:

Ապա ուրեմն զննենք այդ ներհակության յիշ-
կու կողմն ել:

Կապիտալիստ լինել, կնշանակի՝ արտագրության
մեջ վնչ միայն զուտ անհատական, այլև հասարա-
կական դիրք գրավել: Կապիտալը հավաքական ար-
տագրություն եւ և կարող եւ շարժման մեջ լինել
միմիայն բազմաթիվ անդամների դործակցությամբ,
թերևս, վերջ ի վերջո՝ հասարակության ըոլոր ան-
դամների միտսնական գործունեյությամբ:

Ուրեմն կոպիտալը վնչ թե անհատական, այ-
հասարակական ույժ եւ:

Հետհարար, յերբ վոր կոպիտալը կերպարանա-
փոխվի, հավաքական, հասարակության բոլոր ան-
դամներին պատկան սեփականություն դառնա, զրա-
նից անհատական սեփականությունը՝ հասարակուկան-
չի դառնա: Սեփականությունը կիսիսի լոկ իր հասա-
րակական բնույթը: Նա կկորցնի իր դասակարգային
բնույթը:

Դառնանք վարձու աշխատանքին:

Վարձու աշխատանքի միջն գինը՝ աշխատա-
վարձի մինիմումն եւ, այսինքն՝ կենսական միջոցների
այն գումարը, վոր անհրաժեշտ եւ, վորպեսզի բան-
վորն իբրեւ բանվոր կարողանա իր կյանքը պահպա-
նել: Հետեաբար բանվորի իր գործունեյությամբ
սեփականածը հերիք եւ լոկ իր մերկ գոյությունը
պահպանելու համար: Մենք բնակ չենք կամենում
վերացնել աշխատանքի պրոդուկտների այս անհատա-
կան սեփականացումը՝ կյանք պահպանելու համար.
այդ սեփականացումը վոչինչ զուտ արդյունք չի բե-
րում, վոր ստարի աշխատանքին տիրանալու հասար-
ագություն տար ԱՄենք լոկ կամենում ենք վերացնել

այդ սեփականության թշգառական բնույթը, ըստ
վորում բանվորն ապրում եւ սոսկ կապիտալը բազ-
մապատկելու համար և ապրում է այնքան ժամանակ,
վորքան պահանջում է տիրող գասակարգի շահը:

Բուրժուական հասարակության մեջ կենդանի
աշխատանքը՝ լոկ գանձած աշխատանքի բազմապատ-
կելու մի միջոց եւ կոմունիստական հասարակության-
մեջ՝ գանձած աշխատանքը սոսկ մի միջոց եւ բան-
վորների կյանքն ընդլայնելու, հարստացնելու, կյանքի
մակարդակը բարձրացնելու, նրա առաջարիմությանը
զարկ տալու:

Բուրժուական հասարակության մեջ, այդպիսով,
անցյալն եւ իշխում ներկայի վրա, կոմունիստակա-
նում՝ ներկան անցյալի վրա: Բուրժուական հասա-
րակության մեջ կապիտալն եւ սնկախ և անհատա-
կան, մինչդեռ զործունյա անհատը կախման մեջ եւ
և դիմագուրկի:

Յեվ ահա այդ հարաբերության վերացումը
բուրժուազիան անհատականության և ազատության
վերացում և անվանում: Արդարեւ, խոսքը համենայն
գեպս բուրժուական անհատականության, անկախու-
թյան, և ազատության վերացման մասին եւ:

Ազատություն ասած դ, հիմիկվա բուրժուական-
արտագրության հարաբերությունների մեջ, հուսկա-
նում են իբրև ազատ առևտուր, զնելու և վաճա-
ռելու ազատություն:

Սակայն չարչիության անկման գեպքում, ազատ
շարչիությունն ել կընկնի: Գեղեցիկ ճառերը չորչի-
ության ազատության մասին, ինչպես մեր բուր-
ժուազիայի բոլոր ուրիշ ազատազրական ճոռոմարա-
նությունները, ընդհանրապես իմաստ ունեն, կաշ-

28

կանդված չարչիության նկատմամբ, յերբ ուղղված
են միջնադարյան քաղաքացիների ստրկացման դեմ
և վոչ թե չարչիության, բուրժուական արտադրական
հարաբերությունների և իր իսկ բուրժուադիայի
կոմունիստական վերացումի դեմ:

✓ Դուք վրդովվում, սարսափում եք նրանից, վոր
մենք կամենում ենք մասնավոր սեփականությունը
վերացնելու Սակայն ձեր հասարակության մեջ մաս-
նավոր սեփականությունն ազգաբնակության իննը
առանորդականի համար վերացած է: Յեվ մասնավոր
սեփականությունը գոյություն ունի հենց այն պատ-
ճառով, վոր գոյություն չունի այդ իննը տասնոր-
դականի համար: Այսպիսով դուք մեզ մեղադրում
եք, թե մենք ուզում ենք վերացնել սեփականու-
թյան մի ձեւ, վոր կարող եք գոյություն ունենալ մի-
միայն հասարակության ճնշող մեծամասնության սե-
փականազուրկ լինելու անհրաժեշտ նախապայմանով:

✓ Մի խոսքով, դուք մեզ մեղադրում եք, թե մենք
ուզում ենք ձեր սեփականությունը վերացնել: Ան-
շուշտ մենք այդ կամենում ենք:

Այն վայրեցանից, յերբ աշխատանքն այլևս չի
վերածվի կտօպիտալի, փողի, հողային ոենաի, կարձ՝
մենաշնորհ դառնալիք հասարակական ուժի, այսինքն՝
այն վայրեցանից, յերբ անձնական սեփականու-
թյունն այլիս անկարելի կլինի բուրժուականի կեր-
պարանափոխել, այն վայրեցանից, հայտարարում եք
դուք, անձնավորությունն ել կվերանա:

Ուրեմն դուք խոստովանում եք, վոր անձնա-
վորություն առելով դուք ուրիշ վոչ վոր ըմբռու-
նում, բայց յեթե բուրժուա, բուրժուական սեփա-
կանութեր: Այդ անձնավորությունն ել, անտարա-
կույս, պիտի վերանա:

Կոմունիզմը հասարակական որողուկուները սե-
փականելու կարողությունից վոչ վորի չի զրկում,
նու լոկ սեփականացման միջոցով ուրիշի աշխատանքը
լծի տակ գնելու հսարավորությունից ե զրկում:

✓ Առարկում են, թե մասնավոր սեփականության
վերացումով կվերանա ամեն մի գործունեյություն
և համատարած ծովություն կհաստատվի:

Վոր այդպես լիներ, բուրժուական հասարա-
կությունը վաղուց հետեւ կործանված կլիներ հեղ-
գությունից, վորովհետեւ նրանք, վորոնք աշխատում
են այդ հասարակության մեջ, բայց չեն վաստակում,
և ովքեր վոր վաստակում են, չեն աշխատում: Այս
ամբողջ տարակուտանքը մի նույնասությունից
(տավտորդիա) ե բղիտում: ✓ Վարձու աշխատանք չի
լինի, հենց վոր չինի կապիտալը:

+ Բոլոր առարկությունները, վոր ուղղում են
նյութական պրոդուկտների կոմունիստական սեփա-
կանացման և արտադրության յեղանակի դեմ, տա-
րածվում են նմանավես հոգենոր արդասիքների սե-
փականացման և արտադրության վրա: Խնչպես դա-
սակարգացն սեփականության վերացումը բուր-
ժուաների աշխատ հենց արտադրության վերացում
և նշանակում, այնպես ել դասակարգացն կրթու-
թյան վերացումը—ընդհանրապես կրթության վե-
րացում ե թվում նրանց:

? Կրթությունը, վորի կորսայան համար նրանք
ցովում են, ազգաբնակության ահազին մեծամա-
սնության համար մեքենայացում ե նշանակում:

Ել միք վիճի մեզ հետ, քանի վոր բուրժուա-
կան սեփականության վերացումը դուք գնահատում
եք աղատության, կրթության, իրավունքի մասին

ռանեցած ձեր բուրժուական պատկերացումներով։ Ձեր գաղափարները հենց արտադրության և սեփականատիրության բուրժուական հարաբերությունների արդյունք են, ճիշտ այնպես, ինչպես ձեր իրավունքը ձեր գասակարգի որենքի հասցրած կամքն է, մի կամք, վորի ըովանդակությունը ձեր գասակարգի կյանքի նյութական սկայմաններով ե պայմանավորված։

Այն աչառու պատկերացումը, ըստ վորի դուք ձեր արտադրության և սեփականատիրական հարաբերությունները—պատմականորեն առաջ յեկած և արտադրության զարգացման ընթացքում փոփոխվող հարաբերությունները բնության ու բանականության մշտնջնավոր որենք եք դարձնում—հատուկ ե բոլոր խորտակված իշխող գասակարգերին։ Այն, ինչ հասկանալի յե ձեզ համար հնադարյան և ավատական սեփական կանության նկատմամբ, դուք չեք կամենում ըմբռանել բուրժուական սեփականության վերաբերմամբ։

Ընտանիքի վերացում, Ամենաարմատականներն անդամ վրդովվում են կոմունիստների այս քստմնելի մտադրությունից։

Սակայն ինչի վրա ե հիմնվում արդի բուրժուական ընտանիքը։ Կապիտալի, մասնավոր շահի վրա, կիակատար զարգացած ձևով այդ ընտանիքը գոյություն ունի սոսկ բուրժուազիայի համար։ Սակայն բուրժուական ընտանիքի լրացումը պրոլետարիատի հարկագրված ամուրիությունն ե և հրապարակային պոռնկությունը։

Բուրժուական ընտանիքը բնականաբար կանհետանա նրա այս լրացումների անհետացումով և յերկումն ել կանհետանան կապիտալի անհետացման հետ։

¶ Մեղադրում եք դուք մեզ, վոր մենք ուզում ենք վերացնել մանուկների շահագործումն իրենց ծնողների միջոցով։ Մենք մեր այդ հանցանքը խոստովանում ենք։

Սակայն, ձեր ասելով, մենք վերացնում ենք ամենաքնքույշը հարաբերությունները, յերբ անային գասատիրաբակության տեղը—հասարակականն ենք դնում։

Միթե ձեր գաստիրաբակությունը նույզես հասարակությունը չի վորոշում։ Հասարակական այն հարաբերությունների միջոցով, վօրնոց մեջ դուք գաստիրաբակում եք, հասարակություն ուզգակի և անուղղակի միջամտությամբ, դպրոցի միջոցով և այլն։ Կոմունիստները չեն հարում հասարակության ներգործությունը գաստիրաբակության մեջ։ Նրանք միայն փոփոխում են այդ ներգործության բնույթը։ Արանք պոկում են գաստիրաբակության գործը տիրող գասակարգի ազգեցությունից։

Բուրժուական հոսումաբանությունն ընտանիքի մասին և գաստիրաբակության, ծնողների ու զավակների քնքույշ հարաբերությունների մասին այնքան ավելի յեն զգվելի գանում, վորքան խոշոր արգյունագործության շնորհիվ պրոլետարների համար բոլոր ընտանեկան կապերը քակվում են, նրանց զավակները առևտրի հաստրակ առարկաների և աշխատանքի գործիքների են վերածվում։

Սակայն դուք, կոմունիստներդ, համայնականություն եք ուզում մացնել, միաբերան ազգագակում և վողջ բուրժուազիան։

Բուրժուան իր կնոջը նկատում ե իրեն արտադրության սասկ գործիք, նա բում է, վոր արտադրության սասկ գործիք, նա բում է, վոր արտա-

գրության գործիքները պիտի համայնքորեն շահագործվեն և բնականաբար չի կարող այլ միտք անել, քան այն, որը համայնացման վիճակը նայե կանանց և վերտրերվելու:

Նրա մտքով չի անդնում, թե բանն ել հենց այս ե-
գոր կնոջ դիրքը, իբրև արտադրության սոսկ գործի-
քի, — վերանար:

Ասենք, ավելի ծիծաղելի բան չկա, մեր բարժու-
աների բարձր վրդովմունքը կոմունիստների կարծե-
ցյալ կանանց համայնացումի առիթով՝ կոմունիստ-
ները կարիք չունեն կանանց համայնացում մտցնելու,
նա համարյա թե միշտ գոյություն եւ ունեցել:

Մեր բուրժուաները, շրավականանալով նրանով,
վոր նրանց տրամադրության ներքո յեն իրենց պրո-
լետարների կանայք ու աղջիկները, ել չխօսենք
պաշտօնական պրոներության մասին, մեծ բավակա-
նություն են գանում իրենց որինական անուսիննե-
րին փախադարձաբար գայթակիցներու մեջ:

Բուրժուական ամուսնություններոք համայնականությունն է: Ամենաշատը՝ կարելի յեր կոմունիստներին մեղադրիլ վոր կեղծավոր քողարկած համայնականության տեղը՝ պաշտոնական սրտաբաց համայնականություն են ուզում մացնել: Ասենք ինքնին հասկանալի յե, վոր հիմիկվա արտադրտկան հարաբերությունների վերացումով կանհետոնա նայել նրանցից բղխող համայնականությունը, այսինքն պաշտոնական և վոչ պաշտոնական պոռնկությունը:

Ապա՝ կոմունիստներին մեղադրում են իրը թե նրանք ուղարկ են վերացնել հայրենիքը, ազգությունը

Բանվորները հայրենիք չունեն: Զի կարելի նրանցից էլեկտրական այս գործընթացը պահանջում է առանձին էլեկտրական աշխատավայրերի առաջակայքում:

որովէսաւիսոց հարկադրված և նաև քաղաքական
իշխանություն նվաճելու, բարձրացնելու իր պուխը,
վորպես տղային գասակորդ, կազմակերպելու ինքն
իրեն, իբրև ազգ - Դա տակալին տղային և, թեյլ
վոչ մի դեպքում բարժուական իմաստով:

Արդին յուրժուազիայի զարդացման հետ, առեւ-
որի աղասության, համաշխարհային շուկայի, ար-
գյունարքության արագըլության միակերպության
և նրան համապատասխան կենսական հարաբերու-
թյունների հետ քանի զնում ավելի և ահճեանում
ազգային մեկուացումը և ներհակությունը ժողո-
վորդների-միջի:

Պրովետարիանի ամբապետությունն առավել ես
անհետացնել կատ նրանց։ Նրա ազատագրման
առաջնապետը պայմաններից մեկն է, տունվագն քա-
ղաքակիրթ յերկրների պրովետարիանի միահամուռ
գործակցությունը։

Ինչ չափով կվերանա մի անհատի շահագործումը
մյուսի միջոցով, կվերանա նայե մի աղջի շահագոր-
ծումը մյուսի միջոցով։

Դաստիարակերի ներհաւելության անկման հետ մի
ազգության մեջ՝ կվերանա նոյն ազգերի թշնամա-
կան գիրքը իրար դեմ:

կառ Առ
կրոնական, վիլիսովիացական և ընդհանրապես
գաղափարաբանական տեսակետից կոմունիզմի դեմ
հարուցած մեղադրանքները չարժեն մանրամասն
քննության:

Միթե խոր միաք և հարկավոր ըմբռնելու
համար, զար մարդկանց կենսական պայմանների
հետ, նրանց հասարակական հարաբերությունների
հետ, նրանց հասարակական գոյություն հետ փոխ-
պորունաձև տևական

վում են նոյն նրանց մտապատկերները, հայացքները և հասկացողությունները, մի խոսքով՝ նրանց վողջ գիտակցությունը:

Գաղափարների պատմությունն ինչ է ապացուցանում, յեթե վոչ այն, թե հոգեոր արտադրությունը կերպարանափոխվում է նյութականի հետ վորեւ ժամանակի իշխող գաղափարները միշտ ախրապետող զասակարգի գաղափարներն են յիշել:

Առում են՝ կան գաղափարներ, վոր տմբողջ հասարակություն և հեղափոխում: Դրանով լոկ այն փաստն են՝ արտահայտում, թե հին հասարակության մեջ նոր կարգերի տարրեր են գոյացել, վոր կենսական հին հարաբերությունների տարրալուծմանը քայլ գայլ հին գաղափարների տարրալուծումն է հետեւմ:

Յերբ վոր հին աշխարհը մոտ եր կործանման, քրիստոնեական կրօնը հաղթեց հին կրօններին: Յերբ վոր 18-րորդ դարում լուսավորության գաղափարները վանեցին քրիստոնեական գաղափարը — ավատական հասարակությունն իր որհասական մահու պայքարն եր մղում այն միջոցին հեղափոխական բուրժուագիտության ազատության գաղափարներն արտահայտում են սոսկ ազատ մըքամի տիրապետությունը գիտության ասպարիկում: Խղճի և դավանության ազատության գաղափարներն արտահայտում են սոսկ ազատ մըքամի տիրապետությունը գիտության ասպարիկում:

«Սակայն կրօնական, բարոյական, փիլիսոփայական, քաղաքական, իրավական և այլ գաղափարները, — կասեն մեզ, — ճիշտ ե, փոփոխության են յենթարկվում պատմական գարգացման ընթացքում, յայց կրօնը, բարոյականությունը, փիլիսոփայությունը, քաղաքականությունը, իրավունքը այդ անընդհատ փոփոխությունների մեջ միշտ պահպանվել են»:

«Բացի այդ հավերժական ճշմարտություններ կան, ինչպես՝ ազատությունը, արդարությունը և այն, վոր ընդհանուր են պատմական բոլոր փիճակներին: Քակ կոմունիզմը, կերպարանափոխելու փոխարեն վերացնում է կրօնը, բարոյականությունը և այդպիսով հակասում մինչայժմյան պատմական իրադարձությանը»:

Ինչի և հանգում այդ մեղադրանքը: Մինչայժմյան հասարակության վողջ պատմությունը շարժվել է գասակարգային ներհակությունների մեջ, վոր տարբեր ժամանակաշրջաններում տարբեր կերպարանք են ունեցել:

Սակայն ինչ ձեւ ել ընդունած լինեն՝ հասարակության մի մասի շահագործումը մյօւսի միջոցով բոլոր անցած դարերի համար — ընդհանուր փաստ եւ Ռւսակի և զարմանալի չել, վոր բոլոր դարերի հասարակական գիտակցությունը, չնայած բազմապիսության և բոլոր զանազանություններին, շարժվել է վորոշ ընդհանուր ձեռքով, գիտակցության այն ձեերի մեջ, վոր վերջնականապես կվերանան միայն դուսակարգերի ներհակության լիակատար վերացումով:

Կոմունիստական հեղափոխությունն ամենաարժամատական կերպով պիտի խզի սեփականատիրական ավանդական հարաբերությունների կապերը: Զարժանալի չել, վոր նրա զարգացման ընթացքում ամենաարժամատական կերպով պիտի քակվեն ավանդական գաղափարների կապերը:

Սակայն թողնենք բուրժուազիայի արած առարկությունները կոմունիզմի գեմ:

Մենք արդեն վերը տեսանք, վոր բանվորական հեղափոխության մեջ առաջին քայլը — պրոլետա-

րիտարի վերելքը, իշխող գասակարգի բարձրության
հասնելը—կովով դեմոկրատիա ձեռք բերելն է:

✓ Պրոլետարիատն իր քաղաքական իշխանությունը
կոգուադործի բուրժուազիայից նրա վողջ կապիտալը
կամաց-կամաց խիելու, արտադրական բոլոր գործիք-
ները պետության ձեռքում, այսինքն՝ իրեն իշխող
գասակարգ կազմակերպված՝ ոլույթարիատի ձեռքում
կենտրոնացնելու և արտադիր ուժից ըստ կարել-
վույն արագ կերպով բազմապատկելու համար:

Սկզբում դա, բնակչանաբար, կարող և աեղի
աւնենալ. միմիայն բռնի միջամտությամբ սեփակա-
նատիրական իրավունքի և արտադրության բուր-
ժուական հարաբերությունների մեջ, հետեւաբր
այնպիսի միջոցներով, վոր անտեսապես անբավարար
և խախուտ կթվան և վոր սակայն շարժման ընթաց-
քում իրենց հաղթահարելով՝ անխուսափելիորեն
վողջ արտադրական յեղանակի հեղաշրջման միջոց
են գառնալու:

Այդ միջոցները, ի հարկե, տարբեր յերկրնե-
րում—տարբեր են լինելու:

Այնու հանդերձ, ամենատառաջաղեմ յերկրնե-
րում գրեթե ամենուրեք կարող են կիրարկվել հե-
տեյալ միջոցները.

1. Հողային սեփականության եքսուրոպրիացիո-
ն հողային սենտի գործադրությունը պետական ծախ-
սերի վրա:

2. Ռւժեղ պրոզեսիվ հարկեր:

3. Փառանդային իրավունքի վերացում:

4. Բոլոր եմիգրանտների (փախստականների)
և ըմբռուտների սեփականության գրավումը,

5. Վարկի կենտրոնացում պետության ձեռքում,

պետական կապիտալ և բացառիկ մենաշնորհ վայելող
ազգային բանկի միջոցով:

6. Փոխադրության գործի (տրանսպորտի) կեն-
տրոնացում պետության ձեռքում:

7. Պետական գործարանների, արտադրության
գործիքների բազմապատկում, հողի մշակում և բա-
րելավում ընդհանուր ծրագրով:

8. Հավաստրապես պարտադիր աշխատանք բո-
լորի համար: Սրդյունացերական գորաբանակի կազ-
մակերպում, մանավանդյերկրագործության համար:

9. Հողագործության և արդյունաբերության
բնագավառների միացում: Նպաստում քաղաքի և
գյուղի տարբերության աստիճանական վերացման:

10. Բոլոր մանուկների հասարակական և ձըի
կըթություն: Մանուկների գործարանային աշխա-
տանքի այսորվա ձեի վերացում: Կըթության և նյու-
թական արտադրության միացում և այլն:

✓ Հենց վոր զարգացման ընթացքում անհետանան
գասակարգային տարբերությունները և բոլոր արտա-
դրությունները կենտրոնանան համախմբված ան-
հատների ձեռքում—հասարակական իշխանությունը
կկորցնի իր քաղաքական բնույթը. ✓ Բաղաքական իշ-
խանությունը, բռն իմաստով, մի գասակարգի կազ-
մակերպված ույժն և մյուսին հպատակեցնելու հա-
մար: Յերբ վոր պրոլետարիատը բուրժուազիայի դեմ
վարած պայքարի ընթացքում անհրաժեշտաբար միա-
նա վորպես դտուակարգ, հեղափոխության միջոցով
տիրապետող դասակարգ դառնա և, վորպես տիրապե-
տող գասակարգ, բռնի կերպով վերացնի արտադրու-
թյան հին հարաբերությունները, արտադրության այդ

հարաբերությունների հետ կմերանան նայե դասա-
կարգային ներհակության գոյության պայմանները,
ընդհանրապես դասակարգերը և զրանով նայե իր
իսկ տիրապետությունը, իբրև դասակարգի:

Հին բուրժուական հասարակության տեղը, իր
դասակարգերով և դասակարգային ներհակությամբ,
կրոնի մի միություն, վորի մեջ յուրաքանչյուր
վորի ազատ զարգացումը պայման կլինի բոլորի
ազատ զարգացմանը:

III

**ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄԱԽՆԻՍՑԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. ՅԵՏԱԿԻՄԱԿԱՆ ՍՈՅԻԱԼԻԶՄ

Ա. Ավատական սոցիալիզմ

Ֆրանսիական և անգլիական ազնվականություն-
ներն իրենց սպառմական դիբքով կոչված են արդի
բուրժուադիսյի գեմ պամֆլետներ (պարավագիր)՝
գրելու։ Ֆրանսիական՝ 1830 թվի հուլիսան հեղա-
փոխության միջոցին և անգլիական՝ վերանորոգչա-
կան շարժման ժամանակ նրանք իրենց առկի նորե-
լուկ-հակառակորդից մի նոր ջարդ ել կրեցին։ Պորե-
լուրջ քաղաքական օպայքարի մտախն խոսք լինել
այլեւ չեր կարող։ Մնացել եր սոսի գրական պայ-
քարը։ Սակայն զրական ասպարիզում ել սեսամվ-
րացիայի շրջանի ֆրազարանությունն անհնար եր զո-
ռեկը Համակրություն զրավելու համար ազնվականու-
թյունը հարկապրություն եր իր շահերն աշխաթել անե-
լու ձև անել և իր մեղադրական թուղթը բուրժուա-
զիայի գեմ բանաձեկը լոկ շահագործվող բանվար
դասակարգի շահերի անսակետից։ Նա իր նոր տերերի
վրա խայտառակող յերգեր եր յերգում, ավել կամ
պակաս բաթարեր մարգարեցություններ շնչում նրա
ակտոնջին և զրանով միաթարգում։ Այզպիս և ավա-

տական սոցիալիզմի ծագումը — կես-վորք, կես պատկվել (ծաղրագիր); կես անցյալի արձագանք, կես դաշլիքի սպառնանք: Յերբեմն դառը, սրամիտ, կծու դատողություններով բուրժուազիայի սիրոր դադելով, ազնվականությունն արդի պատմության ընթացքն ըմբռնելու իր կատարյալ անկարողությամբ միշտ դավեշտական տպավորություն ե գործ ել:

Ազնվականները թափահարում ենին պրոլետարական մուրացկանի տոպրակը, վարպետ գրոշակ իրենց յետելից ժողովուրդ հավաքելու համար: Սակայն ամեն անդամ նրանց հետմելիս՝ ժողովուրդը նրանց մեջին նին ավատակոն տահմանիշներ են նկատել և բարձրաձայն ու տնտառեկառ հրառություն լքել նրանց:

Ֆրանսիական լեգիտիմականների մի մասը և «յերիտասարդ Անդիմ» ամենից լավ են ներկայացրել այդ խաղը:

Յերբ վոր ավատատերերն ապացուցանում են, թե իրենց շահագործումն այլ կերպ ե յեղել, քան ժամանակակից բուրժուականը, նրանք վարք ինչ մոռանում են, վոր իրենք շահագործելիս են յեղել միանգամայն տարրեր և հիմի անհետացած պայմաններում ու պարագաներում: Յերբ վոր նրանք մատնանիշ են անում, թե իրենց իշխանության ներքո արդի պրոլետարիատը գոյութիւն չի ունեցել, վարքը ինչ մոռանում են, վոր արդի բուրժուազիան ենց նրանց հասարակարգի անհրաժեշտ ծնունդն ե:

Ասենք, նրանք այնքան քիչ են թագցնում իրենց քննադատության յետադիմական բնույթը, վոր նրանց զիսավոր մեղադրանքը բուրժուազիայի դեմ հենց այն ե, թե բուրժուազիայի տիրապետության ներքո մի դասակարգ և գաբրացել, վոր վողջ նին հասակակարգը հոգու և ցնողացնելու:

Նրանք բուրժուազիային ավելի յեն հանդիմանում հեղափոխական պրոլետարիոտ արտագրելու համար, քան առհասարակ պրոլետարիատ առաջ բերելու համար:

Դրանից ե, վոր գործնական քաղաքականության մեջ նրանք մասնակցում են բանվոր դասակարգի դեմ ուղղված բոլոր բռնի միջնորդներին և, հակառակ վերամբարձ ճառերին, առորյա կյանքում հանդիսակերպով վոսկի խնձորներ են քաղում և հավատարմությունը, սերն ու պատիվը, իրենց շահը չը մոռանալով փոխանակում բրդի, ճակնդեղի և ողիի:

Ինչպես տերտերը ավտատիրոջ հետ միշտ ձեւը ձեռքի տված և զնացել, այնպես ել տերտերուն սոցիալիզմն ե ավատականի հետ ընթանում:

Ավելի հեշտ բան չկա, քան բրիտանեցական ճգնությանը սոցիալիստական գունավորում ապր: Միթե քրիստոնեությունը չի մաքանել նայել ընդդեմ մասնավոր սեփականության, ամունության և պետության: Միթե դրանց աեղը նա չի քարոզել բարեգործություն ու աղքատություն, կուսակրոնություն և մարմնի մեսցում, մենաստան ու յեկեղեցի: Քրիստոնեական սոցիալիզմը լրկ որհնած ջուր ե, վորով տերտերը որսկում և ազնվականության զարնությունը:

Բ. Մանր-բուրժուական սոցիալիզմ

Ավատական ազնվականությունը միակ դասակարգը չեր, վարին տապալեց բուրժուազիան, մենակ նրա կյանքի պայմանները չեն, վոր արդի բուրժուազիան հասարակության մեջ չըրանում են ու չքանում: Միջնադարյան քաղքենիներն ու մանր գյուղացիու-

Ն

թյունն արդի բուրժուազիայի նախորդներն են յեղել։
Սրդյունագործության և առևտրի կողմից պահան-
զարգացած յերկրներում աճող բուրժուազիայի կող-
քին այդ գասակարգերը տակավին քաշ են առաջիս
իրենց գոյությունը։

Այն յերկրներում, վորտեղ դարձացել ե արդի
քաղաքակրթությունը, մի նոր քաղքենիություն և
գոյացել, վոր յերեսում և պրոլետարիատի և բուր-
ժուազիայի արանքում և, իբրև լրացում բուրժուական
հասարակության, շարունակ նորից ու նորից և գո-
յանում։ Բայց նրա անգամները մրցման շնորհիվ
շարունակ պրոլետարիատի շարքն են նետվում և խո-
շոր արդյունաբերության զարգացման հետ նրանք
իրենք ել նախատեսնում են այն ժամը, յերբ պետք
ե անհետանան և տուերի, մասութակառաջի, հո-
ղագործության մեջ փոխարինվին վերակացուներով
ու մանր ծառայողներով։

Այն յերկրներում, վորտեղ գյուղացի դասա-
կարգն ազգաբնակության կիսից շատ տվել է, ինչպես
ֆրանսիայում, ընական է, վոր զբողները, վորոնք
պրոլետարիատին պաշտպանել են ընդդիմ բուրժուա-
զիայի, մանր-քաղքենիուկան և մանր-գյուղացիական
չափունիշով են քննադատել բուրժուական կարգը և
բանվորների կուսակցությունը մանր-քաղքենիության
անուակեակից են ըմբռնել։ Ահա թե ինչպես և զոյտ-
ցել մանր-բուրժուական սոցիալիզմը։ Միամոնդին
այդ գրականության պարագլուխն և հանդիսանում
վոչ միայն ֆրանսիայում, այլ և Անգլիայում։

Այդ սոցիալիզմը ծայր առտիճան սրամտութեն-
տարրալուծել ե արդի արտադրության հարաբերու-
թյունների հակառակությունները և մերկացրել անու-

սագետների կեղծավոր լավատեսությունը։ Նա ան-
հերքելի կերպով ապացուցեց աշխատանքի բաժան-
ման և մեքենաների կործանարար ազդեցությունը։
Ապացուցեց, վոր կապիտալի և հողատիւթյան
կենտրոնացումը, գերարտադրությունը, ճգնաժամերը
մանր-քաղքենիներին անխուսափելի կորսույան են
մատնում։ Ցուցադրեց պրոլետարիատի թշվառությու-
նը, արտադրության անիշխանական բնույթը, աղա-
ղակող անհամաշափությունը հարստության բաշխման
մեջ, արդյունաբերական ավերիչ պատերազմներն
ազգերի միջև, հին բարքերի, ընտանեկան հին կա-
պերի, հին ազգերի կազմալուծումը։

Սակայն իր զրական բովանդակությամբ այդ սո-
ցիալիզմը կամ ձգտում է արտադրության և փոխի
հին միջոցները վերականգնել և դրանց հետ նայեա-
փականատիրական հին հասարակությունը, կամ թե կա-
մենում է արտադրության և փոխի արդի միջոցները
բանի կերպով վերստին սեփականության հին հարա-
բերությունների շրջանակի մեջ պարփակել, վորներնք
խորտակել են և պիտի խորտակելին։ Յերկու դեպքում
ել նու յետադիմական է և ուսուպիտկան միաժա-
մանակ։

Արդյունաբերության համբյալույին կազմը և
նահապետական անտեսությունը պյուլում—ահա նրա
վերջին խոսքը։

Նրա զարգացման շարունակությունն այդ ուղղու-
թյունը—վատույժ վայուն դարձավ։

Գ. Գերմանական կամ «Համարիս» սոցիալիզմ

Ֆրանսիայի սոցիալիստական և կոմունիստական
պրականությունը, վոր աիրող բուրժուազիայի ճնշման

44

ներքոյ յե ծագել և այդ տիրապետություն դեմ աեղի ունեցած պայքարի գրական արտահայտությունն եւ, Գերմանիաներմուծվեց այնպիսի մի ժամանակ, յերբ բուրժուազիան ավատական աբովյուտիզմի հետ նոր-նոր եր պայքարի բանվել:

Գերմանիայի փիլիսոփաները, կիսափիլիսոփաները և իմաստակները տգոհ-ազան վրա տվին ա. գ գրականությանը և մոռացան միայն, վոր այդ գրականության ներդադիմով ֆրանսիայից միաժամանակ ֆըրանսիակոն կենաւական պայմանները Գերմանիա չելին ներդադիմել Գերմանական պայմաններում ֆրանսիական գրականությունը կորցրեց իր վողջ սնմիջական — գործնական նշանակությունը և զուտ գրական կերպարանք ընդունեց: Նա պիտի թվար պարագ մտորմունք կյանքում մարմացնելու մարդկային եյությունը: Այսպիս, որինակ, 18-րդ դարի գերմանացի փիլիսոփաների համար առաջին ֆրանսիական հեղափոխության պահանջներին ընդհմնապես զործանական բանականության պահանջների իմաստ ունելին: Ֆրանսիական հեղափոխական բուրժուազիայի կամքի արտահայտությունները նրանց աշխում «զատ կամքի» որենքներ ելին, կամքի, ինչպես նա պետք է վոր լինի, մարդկային ձշմարիտ կամքի:

Գերմանացի գրականների աշխատանքը բացառապես այն ե յեղել, վոր ֆրանսիական նոր գաղափարները հաշտեցնեն իրենց հին փիլիսոփայական խզմի հետ կամ թե չե իրենց փիլիսոփայական տեսակետից յուրացնեն ֆրանսիական գաղափարները:

Այդ յուրացումը նույն ձևով կատարվեց, վորով առնաւարտկ ոտար լեզու չեն յուրացում, այն ե թարգմանության միջոցով:

Հայոնի յե, վոր գանականները հին հեթանոսական ժամանակվա դասական ձեռագրերի վրայից կաթոլիկ ոուրբերի անճաշակ վարքեր ելին գրում: Դերմանացի գրականները ֆրանսիական աշխարհիկ դրականության նկատմամբ ընդհակառակն ելին ոնում: Նրանք իրենց փիլիսոփայական անմտությունները գրի ելին տանում ֆրանսիական բնագրի յետեկց: Արինակ՝ ֆրանսիացիների արած փողային հարաբերությունների ընհագատության յետեր նրանք դրել են «մարդկային եյության ոտարացում», բուրժուական պետության ֆրանսիացիների արած քննագատության յետեր՝ «վերացական-հանրության տիրապետության վերացում» և այն, և այն:

Ֆրանսիական իրադարձությունների զեղծումը փիլիսոփայական այդ գատարկաբանությունը նրանք մկրտել են «գործի փիլիսոփայություն», «Ճշմարիտ սոցիալիզմ», «սոցիալիզմի գերմանական վիտություն», «սոցիալիզմի փիլիսոփայուկան հիմափորում» և այն տնուններով:

Ֆրանսիական սոցիալիստական-կոմունիստական գրականությունն այդօփիսագ կոտիկց: Յեվ վորովինետե այդ գրականությունը դերմանացիների ձեռքում դադարեց մի գասակարգի մյուսի դեմ մկած պայքարի արտահայտությունը լինելուց, գերմանացին այն համոզման յեկալ, թե հաղթահարել ե «ֆրանսիական միակողմանիություն», վոր նա ճշմարիտ կարիքների տեղը — ճշմարտության կարիքն և տաջ մզում, պրուետորիատի շահերի փոխարեն — մարդկային եյության շահերը, առնաւարտկ մարդու, վոր վոչ մի դասակարգի չի պատկանում, վոր ընդհանրապես վոչ թե իրականության մեջ գոյություն ունի, այլ փիլիսոփայական մտապատկերների մթամած յերկնքում:

Գերմանական այս սոցիալիզմը, վոր իր դպրուցական անող մարդանքներին այնքան լուրջ ու հանգիստոր եր վերաբերվում և վորի մասին նա այնքան աղմկել ու փողեր և հաշեցրել,—փոքր առ փոքր կորցրեց իր պեղանտական անմեղությունը:

Գերմանական, գլխավորապես պրուսական բուրժուազիայի պայքարն ավատականների և արսոլյուտ կայսրության գեմ, մի խոսքով ազատամիտ շարժումը գնալով լրջանում եր:

«Ճշմարիտ» սոցիալիզմն այսպիսով ցանկալի առիթ ունեցավ քաղաքական շարժման հակառելու սոցիալիստական պահանջներ, —ըստ վորում անձնվում եյին լիբերալիզմը, ներկայացուցչական ովետությունը, բուրժուական մրցումը, մամուլի բուրժուական ազատությունը, բուրժուական իրավունքը, բուրժուական ազատությունն ու հավասարությունը, —և բարոզվում ժողովրդական մասսային, վոր նբանք այդ բուրժուական շարժումից վոչինչ վաստակել չեն կտրող և ավելի շուտ ամեն ինչ կկորցնեն: Գերմանական սոցիալիզմը շատ տեղին մոռանում եր, վոր ֆրանսիական քննադատությունը, վորի անպարհական արձագանքն եր ինքը, նախազրում եր առ զի բուրժուական հասարակությունը համապատասխան նյութական կենուական պայմաններով և քաղաքական համապատասխան սահմանադրությամբ, նախազայմաններ, վորոնց նվաճումի մասին տակավին նորոնը եր խոսք բացվում Գերմանիայում:

Տերտերների, վարժապետների, աղնվականների և աստիճանավորների վոհմակներից բաղկացած Գերմանական աբսոլյուտ կառավարությունների ձեռքում այդ սոցիալիզմը բաղձարի խրավիակ եր սպասնորեն պատի բարձրացնող բուրժուազիայի գեմ:

Այդ սոցիալիզմը մի քաղցրավուն լրացում եր մտրակի հարվածների և հրացանների գնդակների դառնության, վորոնցով նույն կառավարությունները ձնշում եյին Գերմանիայի բանվորների ապստամբությունները:

Յեթե «Ճշմարիտ» սոցիալիզմը նմանորինակ մի զենք ե յեղել կառավարությունների ձեռքում գերմանական բուրժուազիայի գեմ, միշտնույն ժամանակ նա յետադիմական շահերի արաւահայտիչն եր յեղել — գերմանական մանր-քաղքենիության շահերի արտահայտիչը: Գերմանիայում 16-րդ դարից մասցած այդ ժամանակից վեր զանողան ձեհրով նորից ու նորից հանդեռ յեկած մանր-քաղքենիությունը, — աիրող կարգերի խկական հասարակական պատվանդանն եւ

Նրա պահպանումը — գերմանական տիրող կարգերի պահպանումն եւ Բուրժուազիայի արդյունաբերական և քաղաքական արբարպետությունից նա յերկյուղով իր հաստատ կործանումն ե սպասում, մի կողմից իրեւ հետեւնք կապիտալի կենտրոնացման, մյուս կողմից՝ հեղափոխական պերութարի ստի զարգացման շնորհիվ: Յեվնրան թվում ե, թե «Ճշմարիտ» սոցիալիզմը մի հարվածով յերկու նախաստակ ե ս զանում: Յեվ այդ սոցիալիզմը տարածվում եր, որպես համաձարակ:

Հայեցարանական (սպեկուլյատիվ) վոստայնից հյուսած, ձարտասան սկան պերճ ծաղիկներով ասեղնագործած, սիրառատ սրտի ցողով թրջած այդ լայն ու արձակ զգեստը, վորը Գերմանիայի սոցիալիստները հազցնում եյին իրենց մի յերկու վոսկրացած հնավերժական ճշմարտություններին», այդ հասարակության մեջ լոկ նրանց ապրանքի վաճառքն եր ավելացնում:

Թերմանական սոցիոլիգն եւ, իր հերթին, քանի պնում, այսքան ավելի յեր ճանաշում իր կոչումը — փորպես քաղքենիության մեծախոս ներկայացուցչի:

Գերմանական ազգը նաև բնականոն (նորմալ) ուղի հոչակեց և Գերմանիայի քաղքենիներին — բնականում մարդիկ։ Սրանց յուրաքանչյուր ոտորությանը ծպոյալ բարձր-սոցիալիստական իմաստ եր հաղորդվում, ըստ վորում այդ արարմունքը հակառակ նշանակություն եր ստանում։ Յեվ յերբ նա ուղղակի հանգես յեկավ կոմունիզմի «կոպիտ-կործանիչ» ուղղության դեմ, և իր անկուսակցական վեհությունը հաշակեց կոտակարգութիւն ամեն պայքարից վեր — դրա նավ նաև վերջին յեզրակացությունը հանեց։ Այն ամենը, ինչ վոր շրջանառության մեջ և Գերմանիայում իրեն այսպէս առաջ սոցիալիստական և կոմունությունն ե պատկանում):

2. ՊՐԵԶՊԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՍ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Բուրժուազիության կամ բուրժուական սարակական ցավերը վերացնել, վորպեսզի ապահովի բուրժուական հասարակության գոյությունը:

Դրանց թվին պատկանում են՝ տնտեսագետներ, ֆիլանտրոպներ (մարդասեր-բարերարներ), հումանիստներ (մարդու ամենից բարձր դասողներ), բանվոր գոտուակարդի վիճակը բարելավողներ, բարեկործու-

*) 1848 թվականին հեղափոխական հողմն այս ամբողջ զծուծ ուղղությունը մեջտեղից սրբեց և նրա գաղափարակի հիբների հավասը կարից այլեւ սոցիալիզմ իրադարձության պարտդուխն ու դաստկան ախարը — պարունակում է:

թյուն կազմակերպողներ, անասուններին հովանակություններ, հակառակության ընկերություն հիմողներ, մանր-մունք վերանորոգիչներ ամենախայտարկետ տեսակի։ Յեվ բուրժուական այդ սոցիալիզմն անզամ մշակվել, ամբողջ սիստեմների յեւ վերածվել:

Որինակ՝ Պրուգոնի Philosophie de la misère-ը*:

Բուրժուա-սոցիալիստները կամենում են պահպանած լինել արդի հասարակության կյանքի պայմանները, առանց դրանցից անհրաժեշտորեն բղխող պայքարի և վտանգի։ Նրանց ցանկացածը — գոյություն ունեցող հասարակությունն ե ի բայց առյալ նրան հեղափոխող և կազմակուծող տարրերը։ Նրանք ուղղում են բուրժուազիա առանց պրոլետարիատի։ Բուրժուազիան այն աշխարհը, վորտեղ ինքն ե տիրում, բնականաբար պատկերում և իբրև աշխարհներից լավագույնը։ Բուրժուական սոցիալիզմը մշակում է այդ միխթարական մտապատկերը և կիսակամ ամբողջական սիստեմի վերածում։ Յերբ նա առաջարկում ե, վոր պրոլետարիատն իրականացնի այդ սիստեմն ու նոր Յերուատարեմ մտնի, նա իրոք միայն պահանջում ե, վոր պրոլետարիատը մնա ներկայական հասարակության մեջ, սակայն զեն զցի իր առելի մտապատկերներն այդ հասարակության մասին։

Սոցիալիզմի մի այլ, պակաս սիստեմական, բայց ավելի գործնական ձեր, ձգտում եր կոտրել բանվոր գոտուակարդի հետաքրքրությունը գեպի ամեն

* «Թշվառության փիլիսոփայությունը» Պրուգոնի այս գրվածը Մարքսը սուր ու կծու քննադատության և յենթարկել 1846 թ. լույս անեած «Փիլիսոփայության թշվառությունը» Misere de la philosophie գրքում։ Ծանոթ. Պ. Մ.

մի հեղափոխական շարժում, պնդելով, վոր պրոլետարիատին վոչ թե այս կամ այն քաղաքական փոփոխություն և ոգուած բերելու, այլ միմիայն կյանքի նյութական պայմանների, անտեսականին հարաբերությունների փոփոխությունների նյութական հարաբերությունների փոփոխությունների նյութական հարաբերությունների առաջդրումը այդ սոցիալիզմը մի պետքում չի հասկանում իր ի արտադրության բուրժուական հարաբերությունների վեհացում, վոր լոկ հեղափոխական հանուպարհով և հսարակության այդ հարաբերությունների հիմքի վրա յէ իրագործվում, հետեւար կազմիրակի և վարձու աշխատանքի հարաբերության մեջ վոչինչ չի փոխում, այլ լավագույն դեմքում բուրժուազիայի տիրապետության ծախօն և պակեցնում և նրա պետական տնտեսության յեղանակը պարզեցնում։

Բուրժուական սոցիալիզմը միայն այն ժամանակապատճենն արտահայտություն գտնում, յերբ վոր սոսկ ճարտասահական ձեւ և զանում։

Աղառ առեւտր—հանուն բանվոր դաստերգիրի շահերի: Հովանավորակ մաքս—հանուն բանվոր դաստերգիրի շահերի: Զնդաններ—հրենուն բանվոր դաստերգիրի շահերի: Ահա բուրժուական սոցիալիզմի վերջին և միակ լուրջ իմաստով առած խոռըր։

Բուրժուազիայի սոցիալիզմը հենց այն պնդում է, թե բուրժուաները—բուրժուած յեն դառնել բացառպես հանուն բանվոր դաստերգիրի շահեր։

3. Քննևելու-ուղղութեական սութիւնից Յեկալութեական սութիւնից

Մենք այստեղ չենք խոսելու այն դաստերգիրի մասին, վոր բայոր մեծ հեղափոխությունների

ժամանակաշրջանում պրոլետարիատի պահանջներն եւ արտահայտելու (թարյոֆի գրվածները և այլն)։

Ընդհանուր խոռվության շրջանում, ավատական հասարակության խորտակիման միջոցին, պրոլետարիատի արած իր սեփական դաստերգայլին շահերն անմիջապես իրագործելու փորձերը անհրաժեշտություն ձախորդ յեղան, չնորհիվ իր իսկ պրոլետարիատի անգարգացած վիճակի, ինչպես և իր ուղարազման նյութական պայմանների պակասի, վորոնք առաջին անգամ հանդես յեկան իրքն արդյունք բուրժուական ժամանակաշրջանի։ Պրոլետարիատի այդ առաջին շարժման ուղեկցող հեղափոխական դրականությունը, ըստ բովանդակության, անհրաժեշտությունը, յետագիմական երբ նա քարոզում և ընդհանուր սակավապետություն և կոպիտ հավասարություն։

Սոցիալիստական և կոմմանիստական բուն սինտեհները, Սին-Սիմոնի, Ֆուրիերի, Ավենի և այլ սիստեմները, պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի վերև նկարազրած առաջին, անգարգացած շրջանում են յերնան զայրա։ (Տես՝ «Բուրժուազիա և պրոլետարիատ» գլուխը),

Այդ սիստեմների ստեղծագործուները թեյև տեսնում եյին դաստերգիրի ներհակությունը, ինչպես և տիրող հասարակության մեջ գոյություն անեցող կազմալուծող տարերը, բայց և այսպես պրոլետարիատի մեջ վոչինչ պատմական ինքնազործունեյություն չելին նկատում, վոչինչ, պրոլետարիատին հատուկ, քաղաքական շարժում։

Դաստերգայլին ներհակության դարդացումը արդյունազործության դարդացման հետ միասին և առաջ գնում, ուսուի և այս սիստեմների ստեղծա-

գործողները պրոլետարիատի ազատազրման համար
և յութական պայմաններ չեն դանում և սկսում են
սոցիալական գիտության, սոցիալական որենքների
յետեվից ընկնել այդ պայմաններն ստեղծելու համար:

Հասաբակական ինքնապորժությունը և ուղարկած անձնական հսարագիտությունը պիտի բռնի, աղասապրման պատմական պայմանների տեղը —յերեվակայականը, պրոլետարիատն աստիճանաբար իբրև դասակարգ կազմակերպելու տեղը —իբրև համապես նյութած հասարակական կազմը. Նրանց համար համաշխարհային գոլիքը պատմությունը սպառ-զում և իբրև հասարակական ծրագիրների քարո-զում ու գործնական իւսոգործումով:

Ասենք նրանք զիտակցում են, վոր իրենց ծըազից
ները գլխավորապես բանելոր զայտակրդի շահերն
են ներկայացնում, իրրկ ամենաթշվառ զայտակարգի
Պրոլետարիատը, հենց ամենաթշվառ զայտակարգը
լինելու պատճառով գոյություն ունի նրանց համար՝

Պատակական պայքարի պնդագած ուր
ինչպես և իրնց սեփական կենսական դրսթունը
բերում են նրանց այս համազմունքի, վոր իրենք
դաստկարգացին ներճակությունից անսահման վեր են:
Նըսէք կամ նուռմ են հասարակության բոլոր անդամ-
ների կինոտկան գրաթյունը բարելավիք, անդամ
նրանց կացությունը, վորոնք լավագույն պայմանների
մէջ են գրված: Դրանից ե, վոր նրանք շարունակ-
կոշ են անում լուղջ հասարակության, առանց խարս-
թյան, ուոյն իուկ շերտաւասրեն-տիրող դաստիարակի: Զե՞ վոր բարձական և լուրջնեկ նրանց սիստեմը, լավա-
գույն հայրապետ հասարակության բավարար յն հայրա-
գոր ծրագիրը ճանաչելու համար:

Այդ պատճառով նրանք ժխտում են ամեն մի
քաղաքական և մանավանդ հեղափոխական գործու-
նեցությունն, նրանք խաղաղ հանապարհով են ու-
ղում իրնոց նպատակին հասնել, մանը և բնակո-
ւարար անաջողության դատապարտված փորձերով՝
որինակի զորությամբ են ձգում նրանք նոր ավե-
տարանի ուղին հարթել:

Ապագա հասարակության մտացածին նկարաց
գրությունը ծագում և մի ժամանակ, յերբ արդեւ-
տարիալը տոկավին ծայրաստիճանն անզարդացած
է, այսպես վոր ինքն ել յերեսկայորեն և ըմբռում
իր գիրքը։ Այդ մտացածին պատկերացումը համա-
պատասխանում է պրոլետարիատի առաջին, նա-
խազգացումներով լիցուն տենչերին՝ հասարակու-
թյան ընդհանրական վերանորոգման տենչերին։

Սակայն այդ սոցիալիստական և կոմունիստական գրությունները քննական տարրեր ել են պարունակում։ Նրանք շշափում են տիրող հասարակության բոլոր հիմքերը։ Ուստի Նրանք մեծապես թանգարժեք նյութ են մատակարարել բանվորների լուսավորության համար։ Ազագա հասարակության վերաբերյալ նրանց դրական առաջարկները, որինակ քաղաքի և գյուղի միջև յեզած ներհակության վերացումը, բնատնիքի, մասնավոր վաստակի, վարձուաշխատանքի վոչնչացումը, հասարակական ներդաշնակության ավելումը, պետությունը լոկ արդյունավետության վարչության վերածելը — բոլոր այս առաջարկները սոսկ գտակարգային ներհակության վերացումն են արտահայտում, ներհակության, վոր նրանց ծանոթ և զարգանալ սկսում, վոր նրանց ծանոթ և տակամին իր սկզբնական անհերազարսն-անոցու

ձեռքի Ռւսակի և այդ առաջարկներն ինքնին գումարութիւնական իմաստ ունեն:

Քննական-ուսուցիչական ոսցիալիզմի և կոմունիզմի նշանակությունը հակառակ հարաբերական և պատմական զարգացման բազ չափով գառակարգային պայքարն եւ զարգանում և ձևակերպվում, կարծեցյալ բարձրացումն այդ ուսցչարից վեր և կարծեցյալ պայքարը նրա գեմ կորցնում է իր վող գործնական արժեքը, վող տեսական արդարացումը: Ռւսակի և այդ սխտեաների հիմնազիրները յեթե շատ կողմից հեղափոխականներ ենին—նրանց աշակերտները միշտ յետադիմական աղանդներ են կազմում: Վարպետների հին հայացքները նրանք ամուր են, պահում, արհամարհելով պրոլետարիատի ոլատմական առաջիւազացումը: Այդ պատճառով նրանք հետևողականորեն ձգում են գառակարգային պայքարը կրկին բթացնել և ներհակությունը մեղմել: Նրանք շարունակ իրենց հասարակական ուսուցիչների փորձնական իրազործման մասին են յերազում, հատ-հատ Փալանստերներ^{*} ու կոմունիստական հոմ-գաղութներ^{**} (Հոմե-Կոլոնիա) հեթևելու մասին, փոքրիկ իկարիա^{***} հաստակելու մասին, նոր Յերուսաղեմի փոքրագիր հրատարակության մասին, և բոլոր այս ողային ամրոցները կառուցանելու

* Յալանստեր—Յուրիերի ծրագրած հասարակական պահանջման անունն է:

** Հոմ—գաղութ (գաղութ յերկրի ներսում, ներյերկային գաղութ)—այսպիս եր անվանում Ավենը իր կոմունիստական նմուշ-հասարակությունները, գաղութ-կոմունաները:

*** Իկարիա և կոչվում այն ուսուցիչական յերեակական յերկիրը, վարի կոմունիստական կարգերը նկարագրել եւ կարծին:

համար նրանք հարկադրված են կաչ անելու բարժուաների մարգասեր սրտերին և փողի քսակներին: Նրանք աստիճանաբար զահավիժում են վերև նկարզրած յետապիմական կամ պահպանողական ուսցիչամասների շարքը, փորոնցից տարբերվում են միմիացն ավելի համար պեղանությամբ և դեպէ իրենց սոցիալական զիտության հրաշուզործությունն անեցած մոլեունդ նախապաշտամունքով:

Նրանք հանգես են գալիս իրեր հակառակորդներ բանվորների ամեն մի քաղաքական շարժման, գոր կարող եւ ծագել նոր ավետարանին կուրսեն հագատալուց:

Ավենականներն Անզիմայում — չարտիստների զեմ են գործում, ֆուրիերականները ֆրանսիայում — ընդդեմ վերանորոգչականների:

IV

**ԿՈՄՈՒԻՆԻՍՏՑՆԵՐԻ ԴԻԲՔԸ ԴԵԳԻ ԶԱՆԱՋԱՆ
ԴԻՄԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Յերկրորդ գլխում ասածից հետո, ինքնին հասկանալի յե կոմունիստների վերաբերմունքը դեպի արդեն կազմակերպված բանվորական կուսակցությունները, այսինքն նրանց վերաբերմունքը դեպի չարախուներն Անդիայում և զեսի հողային-վերանորոգիչները հյուսիսային Ամերիկայում:

Նրանք պայքար են մզում բանվոր դասակարգի առաջադրած անմիջական նպատակների և շահերի համար, բայց և ներկայիս շոքման մեջ նրանք շարժման ազադան են պաշտպանում, Ֆրանսիայում կոմունիստները հարում են սոցիալիստական-դեմոկրատական՝ կուսակցությունը — ընդհամ պահպական և արժատական բուրժուազիայի, վերտապահելով հեղափոխական ավանդությունից բղիած ֆրազներին և պատրանքներին քննողատորեն վերաբերելու իրավունքը:

ԶԱՐԴԵՐԻԱՅՈՒՄ ՆՐԱՆՔ ԹՐԱՄՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՄ

* Ֆրանսիայում այս ժամանակ սոցիալիստական-զեմուկրատական կոչվող կուսակցության քաղաքական պարագաները — Լեգրյու-Ռուին եր, զրտանը — Էռի Բլանը, որին նույնքան հեռու յեր այժմյան դերմանական սոցիալ-զեմուկրատակայից, վորքան յերկնքը — յերկրից:

պահն են, առանց ուրանաչու, վոր այդ կուսակցությունը հակառական տարբերից և բաղկացած, մասսամբ—զիմոկրատական ոոցիալիստներից, ֆրանսիական իմաստով, մասսմբ—արմատական բուրժուաներից:

Եների մեջ կոմունիստները պաշտպանում են այն կուսակցությունը, վոր ազրարտին հեղափոխությունն ազգային ակատագրության պայման և դարձրել, այն կուսակցությունը, վոր առաջ բերեց 1846 թվականի կրակավոյն առանձմբությունը:

Գերմանիայում կոմունիստական կուսակցությունը բուրժուազիայի հետ մքատին և պայքար վարում—քանի բուրժուազիան հեղափոխարար և հանգես դադիս—ընդդեմ արսության (միահետան) միապետության, ակատական հոգատիրության և մասր-քաղքենիների:

Սակայն նա վոչ մի վայրկյան չի դադարում բանվորների մեջ ըստ կարերվույն պայծառ դիտակություն մշակելուց բուրժուազիայի և պրոլետացության միջև յեղած թշնամական ներհակության դիտի միջև յեղած թշնամական ներհակության այն նկատմամբ, վորպեսզի գերմանացի բանվորներն այն հասարակական և քաղաքական պայմանները, վոր առաջ պիտի բերի բուրժուազիայի տիրատեսությունը պիտի բերի բուրժուազիայի գարձնեն, ուղղեն բուրժուազիայի գետ և այսպիսով Գերմանիայի յետազիժուանի մական գասակարգերի անկումից հետո իսկույն և յեթ բուրժուազիայի գետ իսկ պայքար սկսվի:

Կոմունիստներն իրենց ուշը գլխավորապես Գերմանիայի մքա յեն ուղղում, վորովնետի Գերմանիան բուրժուական հեղափոխության նախօրբակին և կանգնած և վորովնետի այդ հեղաշրջումը տեղի

ովտի ունենա ընդհանուր յերոպական քաղաքակրթությունն ավելի առաջարկեմ պայմաններում և շուտ ավելի զարգացած պրոլետարիատի ձեռքով և զրոյի դարու, քոն 17-րդ դարու մ—Մողովայում և 18-րդ դարում—Ֆրանսիայում, ուստի և զերմանական բուրժուական հեղափոխության անդիքական նախերազանքը դառնալ:

Մի խոսքով կոմունիստներն ամենուրեք պաշտպանում են ամօն մի հեղափոխական շարժում ընդդեմ տիրող հասարակական և քաղաքական կայության:

Բոլոր այդ շարժումների ժամանակ նրանք, իբրև շարժման հիմնական հարց, սեփականության հարցն եւ առաջ քաշում, ինչքան ել ավել կամ ովական գարգաղաց ձև ընդունած լինի այդ հարցը:

Վերջապես կոմունիստներն ամենուրեք աշխատում են միարարել ու միարանել բոլոր յերկրների զիմոկրատական կուսակցությունները:

Կոմունիստներն ամաշում են իրենց հայացքներն ու մապրությունները թագանելուց, նրանք բացե ի բաց հայտարարում են, վոր իրենց նպատակներին կարող են միմիացն արգի հասարակարգի բռնի տապահման միջոցով հանել:

Թող, վոր իշխող զասակարգերը սարսափեն կոմունիստական հեղափոխության աչից: Այդ հեղափոխության միջոցին պրոլետարները, շղթաներից զատ, կորցնելու բան չանեն: Նրանք պիտի արարագիտորի ուերը գանձան:

Պրոլետարիներ բոլոր յերկրների, միացեք:

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

26 Խ

Տիսէ

- | | |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Կայ Առեն—Արքայ աշխատանք ու կապիտալ, թարգմ. Ս. Պահամբանի 2. Արքակելի ծավոր պատմության 3. Արքակելի ծրացի արվեստ 4. Ի. Տաղդիլ—Հարկավճր և աշույզը բանվարներին ու պատկացիներին օնփակոն զար և բնչի հմտոր 5. Կոմունիստ առաջն սոցքանականի 6. Գրամք սույնուց 1922 թ. 7. Ո. Մյասնիկյան (Ո. Մարտունի)՝ Մեր քաղաքականությունն ու հերթական խնդիրները 8. Հ. Նովոկառիկյան—Գիտերմինանետներ (վիմատիպ) 1 ա. 9. Պատի սույնուց 1922 թ. 10. Հ. Նախակառիկյան—Հանրահաշիվ (վիմատիպ) 5 ա. 11. Հ. Մանանյան—Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանձների շրջանում (վիմատիպ), տպագրված ե. 12. Գ. Եղիկյան—Աշխատանքի գարացը, ձեռնորկ (տպագրված ե). 13. Արքակելի ծավոր մաթեմատիկայի 14. Արքակելի ծավոր աշխարհագիտության 15. Սույնարյան—Կարկան զանազներ (ըրբուամատիա), տպագրված ե. 16. Լ. Կ. Կիլիսով—Բույսի կյանքը (ստարդ փաթեթով և 12 նկարով), թարգմ. Ա. Տ. Պ. 60 կ. 17. Ա. Հակոբյան—Փիզիկ (վիմատիպ), տպագրված ե. 18. Բ. Գ. Արծունի—Մառզակազմություն (վիմատիպ) 4 պ. 50 կ. 19. Կոտոների բույր 20. Ավամտանի զարոց (մայբեռնի ինքնի գույքիբը) Ա. տարի, տպագրված ե. 60 կ. 21. Ա. Լենին—Պալմնարքի մատին, թարգմ. Թ. Ո. 15 կ. 22. Գեղի Լույս (ալբորնարան հասկավարների հանոր), կազմեց Հայհաննես Ցեր-Միրացյան 20 կ. 23. Պակրակի Թիուաց պատմությունը ամենահակերճ կծերով, թարգմ. Լեռ (տպագրված ե). | <p style="text-align: right;">Տիսէ</p> |
|---|--|

24. Հովհաննեսիլյան—Վերուժական յերկրաշափուտ
թյան (վիճատիպ), տպադրվում է
25. Մրցնկ.—Յեռանկառաշափություն, թարգմ. Արշակ
Յոհաննի. (վիճատիպ) 6 թ. 50 դ.
26. Մ. Աբեղյան—Առաջնորդ հայոց յեզվին նոր ուղարկության
գրաւթյան 8 կ.
27. Միխ. Գուրեմի.—Յերքի առկավաթյան և ոռքի
պատճառները, թարգմ. Կ. Հ. 5 կ.
28. Է. Մարտի յիկ Ֆ. Խնձելու—Խօսունիուսական Մանի.
Փետու, թարգմ. Քնարքից Պ. Մակինցյանի (տար) 40 կ.
29. Է. Ռադեկի.—Ճակատմբերյան հեղափոխությունը և նրա
աեզր պատճության մեջ, թարգմ. Կ. Հ. 5 կ.
30. Ինչպես կազմել ներքանիում, —ըստ Նիկանովի կազմնց
Ա. Մաշեցյանց. 10 կ.
31. Ա. Տերերյան—Հայոց նոր գրականությունը (վիճ.) 1 թ. 25 կ.
32. Վ. Թիուրյանիկի.—Պաքրաք աշխարհի բարիքների հա-
մար, թարգմ. Կ. Հ. 5 կ.
33. Ճայասանի Ծառականմակն իազմակներության ծրագիր
և կանոնադրություն
34. Մ. Արեգյան—Համաստագրաւթյուն հայոց գրականու-
թյան պատճեններ (վիճատիպ) 1 թ. 50 կ.
35. Օրինակի ծրագիր մայենի յեզվի
36. Դարբնիք Բ. ասրի 80 կ.
37. , Վ. 1 կ.
38. Ա. Մանվյան—Սոցիալիստ-հեղափոխականներն Անգրկու-
հառում (թառցիկ տէնտրէներ), 15 կ.
39. Ա. Գարբիելյան—Յեռագիտական քարտեզներ. Ա. մաս,
Ընկերներն ընություն 40 կ.
40. Նոյնիք—Բ. Ժան, Բույսի կյանքը 40 կ.
41. Վ. Գեմպընի—Ճնշեկան յերկրաշափություն, թարգմ. Հ. Խո-
գակատիկյան (ապագրվում) 6

ՀՀ Ազգային գրադարան



NL0181286

